

## ԱՐԵՎԵՆԸ, ԹԵ՞ ԱՐԵՎՍՈՒՏԸ

Հոգեկերտվածքով եւ բնաշխարհագրությամբ մենք եւ մեր բարձրավանդակը ո՛չ Արեւելք ենք, ո՛չ Արեւմուտք, բայց միաժամանակ եւ Արեւելք ենք, եւ Արեւմուտք: Մենք համադրույթ ենք Արեւելքի եւ Արեւմուտքի՝ թե՛ հոգեմտավոր գծերով, թե՛ աշխարհաքաղաքական դիրքով. մի յուրահատուկ խաչմերուկ արեւելյան եւ արեւմտյան մշակույթների, կրոնների, քաղաքակրթությունների, տնտեսական ուղիների... Մենք հոգով Արեւելք ենք, մտքով՝ Արեւմուտք:

Սակայն ամենից առաջ մենք **Մենք** ենք՝ իբրեւ ինքնատիպ **էություն** եւ **Բնություն**, իբրեւ **Ազգ** եւ **Հայրենիք**, իբրեւ **Հայ** եւ **Հայաստան**:

Բայց մեր կյանքի ընթացքը, որդեգրած ուղին չեն բխում առարկայական այս իրողություններից: Մենք ամեն ինչով «ծգտում» ենք Արեւմուտք, իսկ Արեւելքում չենք փնտրում այն, ինչ պետք է փնտրել:

Կա ներդաշնակության խախտում՝ «քաղաքակրթական Արեւմուտքի» եւ «մշակութային Արեւելքի» հանդեպ մեր կողմնորոշումներում: Մենք հոգով պետք է լինենք Արեւելքում՝ սնվենք այնտեղի հոգեւոր իմաստություններից, մտքով՝ Արեւմուտքում, մշտապես հաղորդակից բնագիտության եւ տեխնիկայի նվաճումներին: Մենք դաշնակիցներ պետք է փնտրենք թե՛ Արեւելքում, թե՛ Արեւմուտքում՝ առավելապես ելնելով ժողովուրդների հոգեհարազատության եւ քաղաքակրթական ընդհանրության սկզբունքից:

Իսկ ամենից առաջ մենք **Մենք** պետք է լինենք՝ իբրեւ **Հայ** եւ **Հայաստան**:

## **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ Վաչե Քալաշյան**

### **Պետականություն եւ պետություն**

Պետականագիտության տված սահմանումներից՝ զուտ նկարագրողական տեսանկյունից առավել մատչելի է պետության ներկայացումը իբրեւ *որոշակի տարածության վրա մի գերագույն իշխանության ներքո կազմակերպված մարդկանց հանրության քաղաքական միավորում*: Ակնհայտ է, որ քաղաքական միավորման նպատակամղվածությունը նոր որակ է ստանում, երբ մարդկանց հանրությունն օժտված է ազգային նկարագրով, իսկ տարածության որոշակիությունն էլ նույնական է այդ ազգի բնական հայրենիքին: Այս դեպքում, պետության ճշմարիտ հատակագիծը չի կարող խարսխված լինել հարափոփոխ քաղաքական չափումների վրա, այլ պետք է կանխորոշված լինի տվյալ ազգի դիմագիծը բնութագրող, չփոփոխվող ԻՆՔՆՈՒԹՅԱՄԲ:

Հետեւաբար, Ազգ-պետության (etat-nation) պարագայում, պետության էությունը բնորոշվում է նրա հիմքում ընկած արժեքների համակարգով, այլ ոչ թե կառավարման համակարգի մեխանիկական կառույցով: Նման մոտեցման դեպքում արտակարգ կարեւորություն է ստանում պետության բովանդակության եւ նրա արտահայտման ձեւերի միջեւ գործող կապերի՝ հանրային փոխհարաբերությունների պարզաբանումը:

Հետադարձ հայացք գցելով՝ կարելի է տեսնել, որ հասարակական փոխհարաբերությունների կանոնակարգման չափանիշերը հիմնավորվել են երկու մակարդակով՝ աշխարհային (ռացիոնալ) եւ վերաշխարհային (իրացիոնալ): Առաջին դեպքում հիմք են ընդունվել մարդկային ապրելակերպի ու գործունեության առօրյա, տեսանելի դրսեւորումներն ու առանձնահատկությունները: Իսկ երկրորդ դեպքում, առօրեականության հատվածականությունը հաղթահարելու եւ համերաշխ կյանքի հասնելու նպատակով, դիմել են վերերկրային բացարձակ, աստվածային հեղինակությունների, կարճ ասած՝ առավելապես հոգեւոր արժեքների:

Ըստ էության դրանք ոչ թե հիմնովին դուրս են աշխարհային իրականությունից, այլ լրացնելով վերջիններիս՝ իմաստ եւ բովանդակություն են հաղորդում հասարակական այս կամ այն կացութաձեւում վավերականացված փոխհարաբերությանը:

Այս երկու մոտեցումների ներդաշնակությունը ենթադրում է *պետականություն* եւ *պետություն* հասկացությունների տարանջատում՝ սահմանումների մակարդակով: Այս պարագայում, պետականությունը կարելի է սահմանել որպես՝ ինքնակազմակերպվելու հավիտենական զգացում տրված հոգեւոր հարթության մեջ, իսկ պետությունը՝ որպես այդ զգա-

ցումի իրացում (պրոյեկցիա) աշխարհիկ իրականությունում: Արդ, պետականություն եւ պետություն հասկացությունների փոխմիասնությունը ճիշտ այնպիսին է, ինչպիսին անհատ մարդու մոտ ենթագիտակցության եւ գիտակցության միջեւ առկա փոխհարաբերությունը: Եվ եթե պայմանականորեն բարոյական արժեքները աղերսվում են ենթագիտակցությանը, իսկ օրենքներով պայմանավորված արտաքին սահմանափակումները՝ գիտակցությանը, ապա նշված փոխհարաբերությունն ուղղակիորեն հանգում է բարոյականություն-օրենք փոխմիասնությանը:

Նմանօրինակ մոտեցումից ակնհայտ է դառնում, որ պետությունը հանդիսանում է պետականության արտացոլանքը, նրա երեւութական դրսեւորումը, եւ որպես *ինքնակազմակերպվելու լավագույն միջոց՝* նրա հիմնական նպատակը պետք է լինի *պետականաստեղծ տեսակի պահպանումը, այսինքն՝ ազգի անվտանգության, ժառանգունակության եւ հարատեւության ապահովումը՝ հոգեւոր, բանական (գաղափարական) եւ նյութական (տնտեսական) մակարդակներում:*

ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ-ը ենթադրում է ժամանակից եւ տարածությունից դուրս գտնվող, հետեւաբար դրանց օբյեկտիվ փոփոխություններից անկախ կայունություն: Այսօրինակ մոտեցման դեպքում՝ Ազգի հարատեւության ապահովումը որպես պետական գործառույթ՝ նշանակում է հոգեւոր, գաղափարական եւ նյութական ոլորտները բնութագրող այն բաղադրիչների պահպանությունը, որոնք կախված չեն ժամանակից (ինվարիանտ են):

ԺԱՌԱՆԳՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ-ը ենթադրում է տարածության եւ ժամանակի մեջ վերը նշված ինվարիանտ բաղադրիչների երեւութական դրսեւորում, ինչը նշանակում է տվյալ ժամանակահատվածին հատուկ կերպերի բովանդակության հիմքում սեփական Ինքնությամբ պայմանավորված արժեքների արմատավորում եւ դրանով իսկ արտաքին ձեւի իմաստավորում:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ-ը ենթադրում է արտաքին ազդեցությունների դաշտում այնպիսի համարժեք արձագանքման ունակություն, որի արդյունքում չեն խաթարվում էթնիկ տեսակը բնորոշող հատկանիշերը: Դա նշանակում է ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ բնութագրող բաղադրիչների ներքին բազմազանության պահպանում, քանի որ միօրինակ համակարգը բոլոր ազդեցություններին հակված է արձագանքել միայն մեկ ձեւով:

Ընդ որում, այս երեք մակարդակներից որեւէ մեկում պետական հոգածության պակասը կամ էլ գերակայությունը անխուսափելիորեն հանգեցնում են պետության նպատակային ֆունկցիայի ձեւախեղմանը՝ առաջ բերելով էություն-երեւույթ կապի խզում եւ որպես հետեւանք՝ պետությունը օտարվում է այն հանրույթից, որի երազանքներն ու հավաքականությունը պետք է մարմնավորեր:

### ***Ազգ-պետության կառուցվածքաբանությունը***

Որպեսզի ներկայացվեն պետության մեխանիկական կառույցի եւ այդ կառույցի հիմքում ընկած արժեքների համակարգի համապատասխանե-

լիության հաստատման եղանակները, անհրաժեշտ է ավանդույթային մշակույթի եւ քաղաքակրթական ստերեոտիպերի տեսանկյունից դիտարկել պետության սոցիալական բնույթը:

Այդ իմաստով, պետությունը դիտարկվում է քաղաքական կազմակերպվածության եւ իշխանության ձեւավորման տեսակետից: Հանրապետական կացութեւի որդեգրումն առնչվում է նաեւ իրավական պետության սահմանումներին, որոնք հանգում են իշխանության երեք թելերի տարանջատման սկզբունքին: Ենթադրվում է, որ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների հարաբերականորեն անկախ գործառնությունները հիմք են հանդիսանում հակակշիռների մեխանիզմի որդեգրման եւ վերջինիս միջոցով՝ ներպետական կյանքում հավասարակշռված քաղաքականության իրագործման: Մյուս կողմից՝ պետությունը, որպես ազգի ինքնակազմակերպման լավագույն միջոց, օժտված է համապիտանի (ունիվերսալ) գործառնություններով, որոնց իրագործման համար անհրաժեշտ է վարել նպատակամղված եւ միասնական քաղաքականություն, ինչը եւ ենթադրում է իշխանության երեք թելերի ներդաշնակ փոխմիասնություն: Ներդաշնակ փոխմիասնության կայացումը տարանջատման պայմաններում սկզբունքորեն հնարավոր է, եթե քաղաքական իշխանության ապակենտրոնացվածությունը հավասարակշռված է միասնականությամբ օժտված պետական ապարատի կենտրոնաձիգությամբ, եւ առկա է պետական իշխանության քաղաքական վերարտադրության ազգային մեխանիզմ:

Տարբեր ժամանակներում այս խնդիրը լուծվել է տարբեր եղանակներով: Եգիպտոսում փարավոնները դաստիարակվում եւ իրենց օժուկն էին ստանում բուրգերում՝ հոգեւոր իշխանությունը մարմնավորող քրմական կաստայի կողմից: Արքայական դինաստիաների ժամանակաշրջանում արքան գահին էր բազմում հոգեւոր իշխանությունը ներկայացնող պատրիարքի օժուկից հետո միայն: Բուլղարիայի ժամանակաշրջանում քաղբյուրոյի շատ որոշումներ կայացվում էին կենտկոմի իդեոլոգիայի բաժնի համաձայնությամբ:

Բերված օրինակներում կարելի է նշմարել մեկ ընդհանուր օրինաչափություն, որը բնորոշվում է աշխարհիկ իշխանության եւ հոգեւոր-գաղափարական արժեքները կրող հաստատությունների միջեւ գոյություն ունեցող հիերարխիկ կապերով: Ընդ որում, այդ իրողությունը խարսխված է եղել մարդկային փոխհարաբերություններում պետության դերի այն ընկալումների վրա, որոնք ներհատուկ են եղել տվյալ պատմական ժամանակահատվածին, եւ չնայած դրսեւորման մեջ առկա տարբերություններին, հիմնական նպատակը եղել է պետական իշխանության շարունակականության ապահովումը:

Վերադառնալով այսօրվա քաղաքական համակարգում հավասարակշռող բարոյաիրավական ինտեգրող թեզի բացահայտման խնդրին՝ հաշվի առնելով մեզանում առկա պետականության ընկալումները, կարելի է արձանագրել, որ այն հանգում է **Օրենքի գերակայության** գաղա-

փարին: Իրավունքի տեսությունից հայտնի է, որ իրավական նորմի սանկցիայի մասով բնորոշված պատժաչափի խստությունը բնավ չի կարող հանգեցնել օրենքի հանդեպ հարգանքի մեծացմանը: Կոնֆուցիոսը լավագույն կառավարումը համարում էր ոչ օրենքների ու հարկադրանքի միջոցով արտաքին փոխհարաբերությունները փոխելու ճանապարհը, այլ՝ երբ մարդիկ, ու առաջին հերթին կառավարողները, իրենք իրենց գոհացում են տալիս. «Ինքն իրեն դաստիարակել եւ արդարության վերադառնալ»: Հետեւաբար, այս գաղափարը բացառապես բարոյական արժեք է, քանի որ հնարավոր չէ գրել «Օրենքը հարգելու մասին» օրենք եւ չկա այնպիսի մի իրավական նորմ, որով հնարավոր կլիներ պարտադրել՝ հարգել օրենքը: Ասել է թե՛ օրենքի ուժ պետք է ստանան ոչ թե վարքի կանոնները, այլ՝ վարքականոնի առկայությունն ընդհանրապես: Ակներեւաբար, բարոյական նորմերի իրագործումը չի կարող հիմնված լինել վարչական մեթոդների վրա: Դրա համար անհրաժեշտ են այնպիսի նոր կառույցներ, ինչպիսիք են էթիկայի հանձնաժողովները, պատվի դատարանները եւ այլն:

Ներկայացված պետության մոդելը ներդնելու համար անհրաժեշտ է ելնել պետական կառավարման համակարգի իրական վիճակից, նրանում առկա զարգացումներից եւ միտումներից: Հարկ է հաշվի առնել, որ տեսանելի պետական կառավարման նոր մոդելի տարրերն արդեն իսկ առկա են մերօրյա պետական համապատկերում. խնդիրն այդ տարրերի միջեւ գործող համակարգային կապերի ներքին տրամաբանության փոփոխումն է՝ որպես ուղենիշ ունենալով ազգ-պետության նպատակային գործառույթները: Ի նկատի ունենալով, որ այսօրինակ խնդրի լուծումը չպետք է երբեւէ հանգեցնի գործող կառավարման համակարգի կաթվածահարմանը, ենթադրվում է իրագործման հարթության մեջ առաջնորդվել աստիճանականության սկզբունքով:

Այս մոտեցման դեպքում գոյություն ունեցող պետական համակարգում ծավալումների ընթացքն ընդգրկում է երկու ենթաուղղություն՝ ռազմավարական-հեռանկարային եւ մարտավարական-իրավիճակային: Առաջինը ենթադրում է այնպիսի միջոցառումների իրագործում, որոնց արդյունքում պետական կառավարման համակարգն աստիճանաբար պետք է մղվի դեպի կանխորոշված (պլանավորված) վիճակ: Հետեւաբար, այս ուղղությունը կրում է առավելապես համակարգային եւ արժեքային բնույթ: Մարտավարական-իրավիճակային ուղղությունը ենթադրում է այնպիսի միջոցառումների իրագործում, որոնք ելնում են պետական կառավարման համակարգի առկա վիճակից եւ նպատակ ունեն օժանդակելու ռազմավարական գործողություններին:

Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում փոփոխությունները պետք է ընդգրկեն պետության կառուցվածքային-կազմակերպական եւ գործառութային հիմքերը՝ որպես ուղենիշ ընդունելով պետական կառավարման համակարգի հետեւյալ ռազմավարական առաջնահերթությունները.

–ազգային նկարագրին համապատասխան իշխանության վերարտադրության մեխանիզմների ստեղծում եւ ներդնում,

–հոգեւոր եւ աշխարհիկ կառույցների միջեւ ներդաշնակ փոխհամագործակցության ապահովման միջոցով՝ պետական իշխանության շարունակականության մեխանիզմների ստեղծում եւ ներդնում,

–հայկական կենցաղավարման ընկալման վերագտնում եւ ներդնում,

–հասարակական եւ պետական կառավարման համակարգերի միջեւ բազմաբնույթ հետադարձ կապերի ստեղծում եւ ներդնում,

–ճյուղային եւ տարածքային կառավարման զուգակցումն ապահովող ենթակառույցների ստեղծում եւ ներդնում:

Ենթադրաբար, այս փոփոխությունները հանդիսանալու են պետական կառավարման համակարգում ազգային-բարոյական բաղադրիչի ձեւավորման հետեւանք, քանի որ ամեն մի արտաքին փոփոխություն արտացոլանքն է գիտակցական եւ հոգեւոր կյանքում կատարվող այն փոփոխությունների, որոնք խարսխված են պետականաստեղծ տեսակի ազգային արժեքների վրա: Թերեւս այս պարագայում է հնարավոր **«կատարյալ ներդաշնակության լինելիությունը ժողովրդի ոգեկառույցի եւ հանրային իրավակարգի ու պետական հաստատությունների միջեւ»** (Գարեգին Նժդեհ):

## **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

### **Հրանտ Տեր-Աբրահամյան**

Քաղաքական դաշտի պլանավորման խնդիրը տեսական եւ գործնական լուրջ նշանակություն ունի հատկապես այն երկրների համար, որոնցում այդ դաշտը դեռ կայացման փուլում է:

Հայաստանյան քաղաքական դաշտը այսօր ներկայացնում է բավական քառտիկ մի պատկեր: Մի քանի բացառություններով, կուսակցական ծրագրերը հանդիսանում են առանձին, իրար հետ քիչ համակցվող գաղափարների խառնուրդ: Չկա նաև գաղափարաքաղաքական դաշտի միասնական համակարգ լինելու պատկերացումը: Մինչդեռ հեռանկարում՝ պետության անվտանգության տեսանկյունից, կարելի է կլիներ քաղաքական դաշտի բերումը մեկ համակարգի, ուր տարբեր բեւեռները եւ դրանց միջեւ ընկած հոսանքները կգործեն մեկ առանցքի շուրջ կամ կլինեն միմյանց փոխարինող՝ կապված ներքին եւ արտաքին սպառնալիքների, աշխարհաքաղաքական մարտահրավերներին ճկուն դիմակայելու խնդրի հետ: Բացի այդ, քաղաքական դաշտի իրական բազմազանությունը եւ ներկայացված հոսանքների գաղափարական հստակությունը կարող են ապահովել համագործակցության լայն սպեկտր արտաքին զանազան քաղաքական ուժերի հետ:

Այսպիսի պլանավորումը ենթադրում է իր ուրույն մեթոդաբանական եւ աշխարհայացքային մեկնակետերը: Դա առաջին հերթին ենթադրում է քաղաքական գաղափարախոսության նկատմամբ գործիքային (*ինստրումենտալ*) մոտեցում:

Այս մոտեցումը ելնում է նրանից, որ քաղաքական գաղափարախոսությունը չի կարող ներկայացնել բացարձակ ճշմարտություն, քանի որ բացարձակ ճշմարտությունը գտնվում է մարդկային մտածողության այլ՝ ավելի բարձր ոլորտներում: Ըստ այդմ՝ քաղաքական գաղափարախոսությունները կարող են ներկայացնել միայն մասնավոր, հարաբերական ճշմարտություններ, որից ելնելով կարելի է ենթադրել, որ ցանկացած այդպիսի գաղափարախոսություն իր մեջ պարունակում է համընդհանուր ճշմարտության այս կամ այն մասը միայն, եւ այսպիսով կարելի է հռչակել քաղաքական գաղափարախոսությունների համեմատական հավասարությունը ենթադրելիք բացարձակ ճշմարտության նկատմամբ:

Ինստրումենտալ մոտեցումը ենթադրում է նաև, որ քաղաքական գաղափարախոսությունները, ներկայացնելով միայն հարաբերական ճշմարտություն, ստորադասված են ոչ միայն առավել բարձր ոլորտ ներկայացնող ճշմարտություններին, այլև ազգային եւ պետական շահերին, եւ այսպիսով կարող են ըստ անհրաժեշտության, պրագմատիկորեն օգտա-

գործվել հանուն այդ շահերի: Ըստ այդմ՝ գաղափարաքաղաքական հոսանքները պետք է «կառուցվեն»՝ ելնելով հասարակական կամ պետական համապատասխան պատվերից, ազգային անվտանգության շահերից, արտաքին մարտահրավերներից կամ այլ տիպի ազգային եւ հասարակական պահանջներից:

Այժմ ներկայացնենք մի քանի «նախագծային» գաղափարաքաղաքական հոսանքներ, որոնք ունեն հասարակության մեջ համապատասխան ստերեոտիպային բլոկեր եւ մաս կարող են կազմել այն ապակենտրոնացված համակարգի, որը կոչված է ապահովելու ազգային շահերին ծառայող գաղափարաքաղաքական դաշտի արդյունավետ գործունեությունը:

Ներկայացվելիք գաղափարաքաղաքական հոսանքները կարող են կատարել երկու տիպի գործառույթ՝ արտաքին եւ ներքին: Ներքին առումով դրանք կարող են ներկայացնել համապատասխան հասարակական շրջանակների շահեր կամ ստերեոտիպային պատկերացումներ, իսկ արտաքին առումով՝ յուրաքանչյուրն իր ոլորտում պետք է իրականացնի ազգին եւ պետությանը անհրաժեշտ քաղաքական համագործակցություն արտաքին ուժերի հետ:

### ***Ազգային-արեւմտամետ\* հոսանք***

Այս հոսանքի նշանակությունն ավելանում է արեւմտյան, հատկապես ամերիկյան ազդեցության աճին եւ ռուսական ազդեցության թուլացմանը զուգահեռ: Այս դեպքում նրա հիմնական գործառույթներն են դառնում ազգայինպետական շահերի պաշտպանումը եւ ավանդական ազգային նպատակների համապատասխանեցումը այդ զարգացումներին, ինչպես նաեւ՝ ազգային պահանջների «թարգմանությունը» գերիշխող ուժերի կողմից քարոզվող ստերեոտիպերին համապատասխան լեզվով:

Հոսանքի պատմա-գաղափարական հիմնավորումները եւ նախադրյալները կարող են լինել հետեւյալները: Հայոց ավանդական քաղաքակրթական-աշխարհաքաղաքական կողմնորոշումը եղել է դեպի «քրիստոնեական Արեւմուտք»: Միայն ավելի ուշ սկզբնապես միասնական այդ կողմնորոշումը բաժանվեց եվրոպամետության եւ ռուսամետության, եւ հայոց ռուսամետությունը, այս տեսանկյունից՝ պատմականորեն ծագում է ընդհանուր քրիստոնեական-արեւմտյան կողմնորոշումից:

Հայկական ավանդական պահանջատիրության եւ ազգային-պետական անվտանգության առումով, ներկայացվող գաղափարական հոսանքը կարող է որդեգրել տարաբնույթ մարտավարական դիրքորոշումներ՝ կախված տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումներից: Ազգային-արեւմտամետ հոսանքը պետք է կարողանա ճկուն օգտագործել համաշխարհային ժամանակակից այն միտումը, որով ուժեղանում է իսլամիզմի եւ արեւմտականության պայքարը: Դա կարող է օգտագործվել եւ ընդհանուր արեւմտյան կողմնորոշման շրջանակներում, եւ այն թեզի

հիմնավորման համար, ըստ որի Թուրքիայի իսլամականացման պարագայում Հայաստանը կարող է հանդիսանալ որպես արեւմտականության առավել կայուն եւ ռեզերվային բաստիոն տարածաշրջանում:

Ազգային-արեւմտամետների գաղափարախոսությունն ընդհանուր առմամբ կարող է արտահայտվել՝ «Հայաստանը՝ տարածաշրջանի նոր Իսրայել» աշխարհաքաղաքական բանաձեւով, ըստ որի ինչպես Իսրայելը Մերձավոր Արեւելքում, այնպես էլ Հայաստանն իր հարեւանների մեջ կարող է դառնալ ԱՄՆ-ի կամ Արեւմտյան Եվրոպայի թիվ մեկ եւ մնայուն դաշնակիցը:

Կարելի է նաեւ այն հանգամանքը, որ այսօրվա դրությամբ Հայաստանը, թեկուզ Անդրկովկասի մասշտաբով, կայացած պետություն է՝ ունի ռազմունակ զինված ուժեր եւ համեմատաբար ներքին կայունություն: Որպես այդպիսին եւ միայն Արցախի ու ԼՂՀ տարածքների վերահսկողությամբ, նա կարող է լինել ցանկացած դոմինանտ ուժի (տվյալ դեպքում՝ Արեւմուտքի կամ ԱՄՆ-ի) ամուր հենարան Անդրկովկասում:

Այս գաղափարական հոսանքի արտաքին քաղաքական կայացման գործում մեծապես կարող է օգտագործվել Սփյուռքի արեւմտյան հատվածի, հատկապես ԱՄՆ եւ Ֆրանսիայի հայկական Սփյուռքի ներուժը:

### ***Ազգային-արեւելամետ հոսանք***

Իբրեւ այս հոսանքի գաղափարական հիմնավորում կարող է հանդես գալ այսօր արդեն միջազգային չափեր ընդունած եվրասիական գաղափարախոսությունը՝ անշուշտ իր հայկական մեկնաբանությամբ\*\*:

Եթե ազգային-արեւմտամետների դրոշի ներքո կարող են միավորվել եվրոպական ինտեգրացիայի կողմնակիցները, ապա եվրասիականությունը պետք է առաջին հերթին համախմբի այն ստվար զանգվածը, որ ձգտում է դեպի հետխորհրդային նոր՝ եվրասիական ինտեգրացիա: Եվրասիական ինտեգրացիայի աշխարհաքաղաքական հիմնավորումը պետք է լինի այդ տարածքի ժողովուրդների միասնական անվտանգությունը, որով պայմաններ կստեղծվեն նրանց իրական անկախության ապահովման համար, եւ հնարավորություն կընձեռվի դիմակայելու բոլոր այն վտանգներին, մարտահրավերներին, որ սպառնում են այդ ժողովուրդների միասնական շահերին:

Այս հոսանքի աշխարհաքաղաքական եւ արտաքին քաղաքական գործառույթը բնականաբար կապված կլինի առավելապես ռուսական կողմնորոշման հետ: Այն կարող է գաղափարաբանական ժամանակակից լեզու հաղորդել ռուսամետ եւ դեպի հետխորհրդային ինտեգրացիա ձգտող հասարակության մասի պատկերացումներին եւ միաժամանակ այդ ձգտումը միավորել ազգային շահի եւ անվտանգության շրջանակի մեջ: Այս առումով հետաքրքիր է, որ նույնիսկ այնպիսի արեւմտամետ երկրներում, ինչպիսիք են Թուրքիան եւ Իսրայելը, այսօր հասարակական ուժերի մի հատվածը փորձեր է ձեռնարկում օգտագործել եվրասիական

գաղափարները՝ Ռուսաստանի հետ իր հարաբերությունները կառուցելու համար:

Ի դեպ, եվրասիական հոսանքը պետք է զորու լինի ապահովել ռուս-հայկական հարաբերությունների զարգացման հասարակական (քաղաքացիական) ոլորտը, որը, ի տարբերություն զուտ քաղաքականի եւ ռազմականի, շատ է հետ ընկած: Հայկական եվրասիականությունը պետք է իմաստավորի հայերի դերը թե՛ ընդհանուր եվրասիական ինտեգրացիայի շրջանակներում, թե՛ Ռուսաստանի հասարակական-քաղաքական եւ տնտեսական կյանքում: Նույնը վերաբերվում է եւ պատմական-քաղաքակրթական ասպեկտին՝ կապված արեւելաքրիստոնեական եւ եվրասիական քաղաքակրթություններում հայերի ավանդի եւ մասնակցության հետ:

Այս գաղափարական հոսանքի արտաքին քաղաքական կայացմանը էապես կարող է նպաստել Ռուսաստանի, Մերձավոր եւ Միջին Արեւելքի հայությունը:

### ***Ճախ հոսանք***

Հայաստանի քաղաքական դաշտում ձախերի ներկայությունը կարելի է երկու առումով: Առաջին՝ այն պետք է արտահայտի հասարակության մտածողության մեջ հիմքեր դրած եւ հայկական ավանդական աշխարհայացքին զգալիորեն համահունչ համայնքային մտածողությունը, երկրորդ՝ պետք է համահունչ լինի ժամանակակից ձախ եւ հատկապես հակազլոբալիստական հոսանքների գաղափարախոսությունների հետ: Միաժամանակ, ձախ հոսանքը պետք է, պատկերավոր ասած, լինի «ծելով՝ սոցիալիստական, բովանդակությամբ՝ ազգային»:

Այս ամենը թույլ կտա վերանորոգված ձախ հոսանքին՝ ստանձնել իրեն համապատասխան դեր թե՛ ներքին կյանքում, թե՛ արտաքին աշխարհի ձախ սպեկտրի հետ հարաբերվելու:

### ***Ազգային-պահպանողական հոսանք***

Պահպանողական հոսանքը կարող է բավականին լուրջ ներուժ ունենալ հայաստանյան հասարակությունում: Այդ հոսանքը կարող է հիմնվել հասարակության մեջ առկա ավանդապահ, պահպանողական արժեքների զգալի ուժի վրա եւ տալ դրանց համապատասխան կազմակերպվածություն՝ կառուցվածքային եւ գաղափարաբանական իմաստավորման առումով: Այս հոսանքի հիմնական գործառույթը, ըստ մեզ, ուղղված է դեպի հասարակության ներքին կյանքը, իսկ արտաքին աշխարհի նկատմամբ այն կարող է առավելապես կատարել պաշտպանական գործառույթ:

Պահպանողականության եւ ավանդապաշտության դաշտը մասամբ փակվում է ազգայնականությամբ, սակայն ազգայնականության մեջ բնականորեն պարունակվում են որոշակի հեղափոխական տարրեր, որի

պատճառով պահպանողականության զուտ ազգայնական մեկնաբանումը չի կարող լիովին բացահայտել այդ երեւոյթը:

Այս առումով, առավել հետաքրքիր է պահպանողականության հիմնումը հայկական-քրիստոնեական արժեքների վրա, որը թույլ է տալիս այդ հոսանքին տալ անհրաժեշտ գաղափարաբանական ծանրություն եւ դարավոր ավանդության վրա հիմնվելու հնարավորություն:

\* \* \*

Ներկայացված գաղափարաքաղաքական նախագծերը կարելու են ոչ այնքան ամեն մեկը առանձին վերցված, որքան որպես միասնական ապակենտրոնացված համակարգի տարրեր: Իրար «հակադիր» այս հոսանքները պետք է ապահովեն քաղաքական դաշտի ճկունությունը, միասնականությունը եւ ծառայեն ազգային անվտանգության շահերին: Միայն այդ դեպքում է իմաստավորված եւ արդարացված նրանց գոյությունը: Այս դեպքում է, որ հայկական քաղաքական դաշտը կխուսափի ճգնաժամերում հայտնվելուց եւ ընդունակ կլինի արդյունավետ դիմակայելու ժամանակակից մարտահրավերներին:

\* Արեւմտամետ կամ արեւելամետ ասելով՝ առավելապես նկատի ունենք քաղաքակրթական կողմնորոշումները:

\*\* Հայաստանի՝ որպես սահմանային քաղաքակրթություն եւ որպես քաղաքակրթությունների կամուրջ լինելու հանգամանքը այն կարելու կռվանն է, որը համահունչ է եվրասիականությանը: Եվրասիականության հայկական տարբերակի մանրամասն շարադրանքին կանդրադառնանք այլ առիթով:

**ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.**  
**ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**  
**Ռուբեն Խուրշուդյան**

Պահպանողականությունը երեւոյթի էությունը լավագոյնս պարզաբանել է ֆրանսիացի մտածող Գ. Լեբոնը. «Յուրաքանչյուր ժողովրդի տեսլականը կայանում է անցյալի հաստատությունների պահպանման եւ վերջիններիս աստիճանական եւ ոչ զգայուն փոփոխություններում»:

Հայտնի են արդի պահպանողականության հետեւյալ տարբերակները՝ արժեքային, սոցիալ-տնտեսական, քաղաքական: Իր հերթին նշյալ տարբերակներից յուրաքանչյուրն ունի իր ներքին տարբերակումը: Ընդամին, արժեքային համակարգն ունի վճռորոշ դերակատարություն եւ թելադրում է, թէ ինչպիսին պիտի լինեն լուսաբանվող երեւոյթի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական մոդելները: Այդ արժեհամակարգի մեջ են մտնում ազգ, պետություն, հավատք, ավանդույթ, ամուսնություն եւ ընտանիք, հեղինակությունների առկայություն, ազատություն եւ պարտականություն, կայունություն սկզբունքները: Թվարկված սկզբունքները ավանդորեն ծանոթ են հայ հանրությանը\* եւ առանձին մեկնության կարիք չունեն: Սակայն կան եւս երկու սկզբունք, որոնք առանցքային տեղ են գրավում պահպանողականության արժեքային համակարգում եւ գոնե այսօր արտասովոր են հայ աշխարհայացքի համար: Դրանք **«տարածքային հրամայականի»** եւ **«բնական անհավասարության»** արժեքային սկզբունքներն են:

Սեզանում գոյություն ունի իրականությանը չհամապատասխանող, բավականին տարածված կարծիք, թէ պահպանողականությունը հետադիմական է եւ խավարամիտ: Այդ կարծիքի ձեւավորման գործում մեծ դեր խաղաց խորհրդային ժամանակ՝ համայնավարական, իսկ անկախության տարիներին՝ ազատական քարոզչությունը: Մինչդեռ պահպանողականության կապը գիտության հետ, թերեւս, ամենամուրն է: Մասնավորապես, պահպանողականները չափազանց լուրջ ուշադրություն են դարձնում կենսաբանական գործոնի վրա, քանզի միայն մարդու կենսաբանական էությունը հասկանալով՝ կարելի է իմաստավորել եւ գուշակել վերջինիս գործունեության եւ վարքի ուղղվածությունը:

Այդ առումով ուշագրավ է անգլիացի գիտնական Զ. Մորիսի խորհուրդը աշխարհի քաղաքական վերնախավին. *«Առաջնորդները լավ սոցիալական մաթեմատիկոսներ են: Բայց այդ դեռ բավարար չէ: Ապագայում էլ ավելի գերբնակեցված աշխարհի հիմնահարցերի ներքո նրանք պիտի դառնան նաեւ լավ կենսաբաններ, քանզի հաղորդալարերի, պլաստիկի, բետոնի, աղյուսի, մետաղի եւ ապակու զանգվածում, որն իրենք վերահսկում են, ինչ-որ մի տեղ թաքնվել է քաղաքակրթության դիմակահան-*

դեսի զգեստ հագած մարդ էակը՝ կենդանի, պրիմիտիվ ցեղային որսորդը, որը պայքարում է այն բանի համար, որպեսզի համատեղի սեփական հնագույն ժառանգած որակները ներկա վիճակի հետ: Եթե տաք հնարավորություն, ապա նա կարող է դարձնել իր մարդկային զազանանոցը մի հիասքանչ պարտեզ՝ խաղի համար, եթե չտաք՝ զազանանոցը կդառնա հսկայական գժանոց»:

Պահպանողականները ամենայն լրջությամբ հետեւեցին վերոհիշյալ խորհրդին եւ սեփական տեսական դրույթները փորձեցին կառուցել՝ հաշվի առնելով կենսաբանական գործոնը: Այսպես ձեւավորվեց «տարածքային հրամայականի» արժեքային սկզբունքը, որն իր հերթին ազդեց պահպանողականների քաղաքական ըմբռնումների վրա: Որպես այդ սկզբունքի հիմնավորում՝ ընդունվեցին ամերիկացի գիտնական Ռ. Արդրիի հիմնադրույթները:

Ռ. Արդրին, հսկայական փաստական նյութի հիման վրա համեմատելով կենդանիների եւ մարդկանց վարքը, եկել էր հետեւյալ եզրակացությունների՝

1. Մարդը ծագել է ագրեսիվ եւ գիշատիչ նախնիներից, եւ դա ֆիքսված է նրա կենսաբանական հիշողությունում: Այդ հիշողությունն իրենից ներկայացնում է ոչ թե անօգտագործելի արխիվ, այլ մարդու վարքի ձեւավորման ակտիվ գործոն:

2. Բնականոն գոյատեւման համար մարդը պիտի ունենա որոշակի կենսատարածք: Տիրապետել կենսատարածքին՝ կոշտ հրամայական է, ինչը ներկա քաղաքակրթության պայմաններում թեւեւ ձեւափոխվում է, բայց իմաստի առումով մնում է նույնը:

3. Ինչպես կենդանիները յուրացնում եւ նշագծում են որոշակի տարածք, այդպես եւ մարդն է իր տիրույթի սահմանները գծում ու պարսպում: Ինչպես նախրային կենդանիները միասին պահպանում են իրենց համատեղ տարածքը օտարներից, այդպես էլ մարդիկ պաշտպանում են սեփական երկիրը թշնամուց:

Առաջին հայացքից մարդ էակին նվաստացնող այս հիմնադրույթները, ճիշտ է, դաժան են, բայց եւ բխում են իրականությունից: Արդրիի եզրահանգումն էլ ավելի համոզիչ է դառնում իր վերջին հիմնադրույթի լույսի ներքո, որն այսպես է ձեւակերպված. «Ժամանակակից տնտեսական գործունեությունը էապես փոփոխել է մարդկային տարածքայնության բնույթը: Այն հիմա նախատեսում է ոչ միայն առկա վարչական եւ քաղաքական սահմաններ, այլեւ ավելի լայն աշխարհագրական ոլորտ, որպեսզի իր ռեսուրսներով ապահովի այս կամ այն «զերցեղի» գոյատեւումը»: Կարծես այս խոսքերը հնչել են ոչ թե 1967, այլ 2003 թվականին՝ իրաքյան պատերազմի կապակցությամբ:

Ինչեւէ, ժամանակակից պահպանողականությունն ընդունեց գիտության կողմից առաջ քաշված հայեցակարգը եւ գրանցեց այն իր ար-

Ժեքային համակարգում՝ որպես «տարածքային հրամայական», փոխառնելով Ռ. Արդրիի գրքի վերնագիրը:

Եթե «տարածքային հրամայականը» լույս է սփռում արդի պահպանողականության քաղաքական մոդելի վրա, ապա «բնական անհավասարության» արժեքային սկզբունքը շատ բաներում պարզաբանում է պահպանողականության սոցիալ-տնտեսական մոտեցումները:

Պահպանողականներն ավանդորեն միշտ ընդգծել են մարդկանց բնական անհավասարությունը ֆիզիկական եւ մտավոր առումով, որից բխում է սոցիալ-տնտեսական անհավասարությունը: Ըստ իրենց, հավասարությունը պիտի լինի լոկ իրավական դաշտում: Նրանք սկզբունքորեն դեմ են «համընդհանուր բարեկեցության պետության» ստեղծման ուղղությամբ՝ սոցիալ-տնտեսական փորձարկումներին: Պետությունը, իրենց կարծիքով, վերցնելով իր վրա սոցիալական քաղաքականության գործառույթը, չպիտի անցնի որոշակի սահմաններ, հակառակ դեպքում այն ուղղակի շնչասպառ է լինում եւ դառնում հեշտ ճարակ քաղաքական շանտաժիստների համար:

«Գերբեռնվածության» հետեւանքով նենգափոխվում են ինչպես պետության, այնպես էլ մարդու բնությունը, վերջինիս ազատության բուն էությունը, բարձր նվաճումների հասնելու պատրաստականությունը եւ պատասխանատվության գիտակցումը:

*«Շրջապատված խեղդող սոցիալական խնամքով,- գրում է գերմանացի պահպանողական Յ. Շելսկին,- մարդը կորցնում է ինքնուրույնությունը: Ծնվում են իրավունքները գերադասող չափազանցված հավակնություններ եւ քամահրանք պարտականությունների նկատմամբ: Աճում է դժգոհությունը սեփական սոցիալական վիճակից, սրվում նախանձի զգացումը: Եվ քանզի յուրաքանչյուրը ապավինում է «համընդհանուր բարեկեցության պետության» հոգատարությանը, ապա մարդիկ կորցնում են գթասրտությունը, կարիքավորին անձամբ օգնելու պատրաստականությունը»:* Դադարում է գործել բնական ընտրության եւ գոյության համար պայքարի օրենքը, որը ժամանակակից պայմաններում ընդունել է իրավունքի կողմից վերահսկվող քաղաքակիրթ մրցակցության ձեւ: Արդյունքում խափանվում է ազգային համակարգի զարգացման դինամիկան, այն ճահճանում է, դառնում թույլ եւ անմարտունակ:

Նման դիրքորոշումը հիմնավորելու նպատակով՝ արդի պահպանողականները կրկին դիմում են ժամանակակից կենսաբանական գիտությանը: Փորձենք այդ կապակցությամբ օրինակներ բերել կենսաբանների մտքերից.

1. *Գենետիկորեն մարդիկ իրենց հազարամյա կենսաբանական պատմության ոչ թե տերերն են, այլ ստրուկները* (Խ. Դելգադո, ամերիկացի կենսաբան):

2. *Սոցիալական վարքի ձեւերը կազմավորվում են բնական ընտրության միջոցով* (Է. Օ. Վիլսոն, ամերիկացի կենսաբան):

3. Մարդու վարքը ձեւավորվում է այնպես, որպեսզի օպտիմալ կերպով համապատասխանի իր կենսունակությանը, բարեկեցությանը եւ վերարտադրմանը (Ռ. Դ. Ալեքսանդեր, ամերիկացի կենսաբան):

4. Մարդիկ, ինչպես եւ գազանները, օժտված են բնածին ագրեսիվությամբ, որը նպաստում է նրանց կենսունակությունը (Կ. Լորենց, ավստրիացի կենսաբան, Նոբելյան մրցանակի դափնեկիր):

Իսկ որպես կենսաբանական այս իրողությունները հասարակական կյանքի հետ ներդաշնակելու բանաձեւ՝ կրկին դիմենք Ռ. Արդրիին. **«Ագրեսիվության գործառույթը հասարակությունում պետք է աջակցի մրցակցությանը, սակայն վերջինս չպիտի ընդունի քայքայիչ եւ կործանարար բնույթ»**: Ինչպես տեսնում ենք, արդի գիտությունը պահպանողականությանը տալիս է սպառնիչ պատասխան իր հարցադրումի կապակցությամբ:

Այժմ տեսնենք, թե ինչքանով են կիրառելի «տարածքային հրամայականի» եւ «բնական անհավասարության» արժեքային սկզբունքները հայ միջավայրում.

ա. Հայրենական հասարակական-քաղաքական մտքի գանձարանում վաղուց իր պատշաճ տեղն է զբաղեցնում լավ մշակված «Հայրենիք» հասկացությունը, որը շատ ավելի հարուստ, ջերմ եւ հոգեհարազատ է հայ տեսակին, քան անդեն, վերացական եւ զուտ գիտական «տարածքային հրամայական» հասկացությունը: Սակայն որպես «Հայրենիք» գաղափարի կենսաբանական օժանդակ հիմնավորում՝ այն մեր աշխարհայացքում, անշուշտ, գոյության իրավունք ունի:

բ. Շատ ավելի բարդ է երկրորդ՝ «բնական անհավասարություն» հիմնահարցի լուծումը: Որպես կանոն «բնական անհավասարության» արժեքային սկզբունքը գործում է վաղուց պետականություն ձեռք բերած ժողովուրդների մոտ: Մեր ժողովուրդն ունի այլ ճակատագիր, եւ պատմական բախտն իր կնիքն է դրել նրա աշխարհայացքի վրա, որում մինչ այսօր ամրագրված է «ունիվերսալ հավասարության» արժեքային սկզբունքը: Անկախ պետականության բացակայության պայմաններում ինչպես Արեւելյան, այնպես էլ Արեւմտյան Հայաստանի բնակչությունն ապրում էր համայնքային կյանքով: Համայնքը, կատարելով սոցիալական խնամքի գործառույթը, նվազեցնելով բնական անհավասարության գործոնը, մի կողմից նպաստում էր հայության գոյատեւմանը, մյուս կողմից՝ թուլացնում անձի սոցիալական ինունիտետը: Խորհրդային կայսրության սոցիալական քաղաքականությունը նույնպես մի կողմից նպաստեց հայ ժողովրդի ֆիզիկական գոյատեւմանը, մյուս կողմից՝ զրկեց նրան նախաձեռնողական սկզբից, որի հետեւանքով մենք հիմա ունենք սոցիալ-տնտեսական առումով «անպիտան» հայրենակիցների ստվար զանգված: Անկախ պետականության պայմաններում, ելնելով ռազմավարական նկատառումներից, հարկ է սկսել աշխատանք՝ «բնական անհավասարության» արժեքային սկզբունքը հասարակությունում ընկալելի դարձնելու

ուղղությամբ, քանզի «ունիվերսալ հավասարության» սկզբունքը թուլացնում է ազգային օրգանիզմը եւ զրկում նրան պայքարունակությունից: Ի դեպ, «անհավասարության» մեր ըմբռնումը (նաեւ հայ ավանդական ընկալումը) ամենեւին էլ նույնական չէ «խտրականություն» եզրի հետ. դրա տակ հասկացվում է ներդաշնակ բազմազանության համակարգում յուրաքանչյուրի առանձին՝ մյուսներից տարբեր գործառույթ ունենալը:

\* Հայ իրականությունում XIX դարի կեսերին ծնունդ առած՝ մտավոր առումով հարուստ պահպանողական հոսանքը, ավաղ, հակասության մեջ գտնվելով ժամանակի հեղափոխական ոգու հետ՝ չթողեց քաղաքական ժառանգություն կառույցի տեսքով:

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

### **Գազիկ Տեր-Հարությունյան**

Այսօր տեղեկատվական գործունը եւ նրա հետ կապված գործընթացները որոշիչ դեր են կատարում հանրային կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում: Տեղեկատվությունն (ինֆորմացիա) իր մեջ պարունակում է հսկայական, առայժմ դեռ գիտական բանաձեւ չունեցող յուրօրինակ էներգիա: Այն, ինչպես օրինակ միջուկային էներգիան, կախված օգտագործման ձեւից եւ նպատակից, կարող է ունենալ եւ ավերիչ, եւ ստեղծարար բնույթ: Տեղեկատվության դերը կարելի է ասել, մարդկության առաջացման իսկ պահից: Սակայն սոցիալական, քաղաքական եւ ռազմական բնագավառներում տեղեկատվության նշանակությունը սկսել է մեծապես աճել նախորդ դարի երկրորդ կեսից, եւ այդ գործընթացը արագացումով շարունակվում է: Ներկայումս, համաձայն գոյություն ունեցող եւ շատերի կողմից ընդունված հայեցակարգերի, տեխնոլոգիապես զարգացած երկրների հասարակությունների կացութաձեւը բնորոշվում է որպես *տեղեկատվական (ինֆորմացիոն)*:

Տեղեկատվական հեղափոխությունը, հասարակության առաջընթացին զուգահեռ, առաջացրեց նաեւ նոր՝ նախկինում նմանը չունեցող խնդիրներ եւ սպառնալիքներ:

#### **Գործողություններ ինֆոսֆերայում**

Տեղեկատվական գործընթացներից բխող վտանգներն ընդունված է անվանել տեղեկատվածին (ինֆոզեն): Դրանք կարելի է դասակարգել երկու հիմնական տիպի.

1. Վտանգներ, սպառնալիքներ, որոնք ուղղված են լայն առումով հասարակության, պետության տեխնիկական տեղեկատվական համակարգերի դեմ:

2. Վտանգներ, սպառնալիքներ, որոնք ուղղված են խաթարելու անհատի, հասարակության կամ ազգի *մտավոր, արժեքային, հոգեւոր համակարգը*:

Ե՛վ առաջին, ե՛ւ երկրորդ դեպքում այդ սպառնալիքները իրագործվում են տեղեկատվական գործողությունների, կամ եթե այդ գործողություններն ընդունում են շարունակական բնույթ՝ *տեղեկատվական պատերազմների* միջոցով: Նշենք, որ այս դարձվածքը առաջին անգամ օգտագործել է ամերիկյան վերլուծաբան Թոմաս Ռոնը, 1976 թվականին, «Բոինգ» ավիաընկերության համար պատրաստած իր «Ձեռքի տեսակները եւ տեղեկատվական պատերազմը» վերնագիրը կրող հաշվետվությունում: Այդ հաշվետվությունում շեշտվում է, որ «տեղեկատվական ենթակառույց-

ները դառնում են ամերիկյան տնտեսության կարելորագույն բաղադրիչը»: Միեւնույն ժամանակ հենց այդ ենթակառույցները վերածվում են խիստ խոցելի թիրախների ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական իրավիճակներում:

Թոմաս Ռոնի առաջադրած խնդիրները խթանեցին Պենտագոնին՝ լայնածավալ տեխնոլոգիական մշակումներ կատարել: Այսօր արդեն ԱՄՆ-ում սպառազինության վրա ընդհանուր ծախսերի մինչեւ 20%-ը բաժին է ընկնում տեղեկատվական ոլորտի սարքերին, եւ այս ցուցանիշը աճելու հստակ միտում ունի: Միեւնույն ժամանակ, սկսած 1993 թվականից, կատարվեցին նաեւ համապատասխան փոփոխություններ ամերիկյան զինված ուժերի կառուցվածքում: Այսօր ԱՄՆ բանակի բոլոր ձեւերն ունեն իրենց տեղեկատվական պատերազմի կենտրոնները: Դրանց ընդհանուր ղեկավարությունն իրագործում է պաշտպանության նախարարի զինված ուժերի կառավարման, հետախուզության եւ կապի գծով տեղակալը:

Իրաքյան առաջին՝ 1991 թվականի պատերազմի ժամանակ նոր տեղեկատվական տեխնոլոգիաները օգտագործվեցին ռազմական գործողություններում: Օրինակ, Իրաքի հակաօդային պաշտպանության համակարգում գործող համակարգիչների «հիշողության» մեջ (դեռ վաճառման պահին) հատուկ ծառայությունների կողմից նախապես տեղադրված էին այսպես կոչված դեստրուկտիվ ծրագրեր՝ կոմպյուտերային վիրուսներ, որոնք էլեկտրոնային հրահանգ ստանալուց հետո շարքից հանեցին Իրաքի ողջ այդ համակարգը:

1996 թվականին Պենտագոնի փորձագետ Ռոբերտ Բանկերը ներկայացրեց մի զեկույց, որը նվիրված էր 21-րդ դարում ԱՄՆ-ի ռազմական նոր դոկտրինային, ըստ որի ողջ ռազմական թատերաբեմը բաժանվում է երկու մասի՝ ավանդական տարածություն եւ կիբերտարածություն: Բնորոշ է, որ վերջինիս տրվում է առավել կարելոր նշանակություն: Ռ. Բանկերը առաջարկեց կիբեր մաներման՝ խուսանավման հայեցակարգը, որը պետք է լրացնի ավանդական ռազմական հայեցակարգերը, եւ որը նպատակ ունի չեզոքացնելու կամ ճնշելու հակառակորդի զինված ուժերը: Այսպիսով, ռազմական գործողություններ վարելու ավանդական ոլորտներին, այն է՝ երկրին, ծովին, օդին եւ տիեզերքին, այժմ ավելանում է նաեւ տեղեկատվական ոլորտը՝ ինֆոսֆերան:

Սակայն *տեղեկատվական պատերազմ* հասկացության եւ նրա բաղադրիչ *տեղեկատվական գործողության* ճշգրիտ սահմանումը տրվեց միայն 1998 թվականին, Պենտագոնի «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրինա» հայեցակարգում: Այդ սահմանումները հետեւյալն են.

– *տեղեկատվական գործողություն*. այն ձեռնարկվում է հակառակորդի տեղեկատվական համակարգերի աշխատանքը (տեղեկատվության հավաքման, մշակման, փոխանցման եւ պահպանման գործընթացը) խաթարելու նպատակով՝ միեւնույն պարագայում պահպանելով այդ համակարգերը:

– տեղեկատվական պատերազմ. դա մի համալիր ներգործում է (տեղեկատվական գործողությունների համախումբի միջոցով) հակառակորդի պետական համակարգի եւ նրա ռազմական, քաղաքական ղեկավարության վրա, ինչը կարող է հանգեցնել հակառակորդի կողմից՝ տեղեկատվական պատերազմ իրագործողի համար նպաստավոր որոշումներ ընդունելուն, կաթվածահար անել հակառակորդի կառավարման ողջ համակարգը:

Ինչպես հետեւում է այս սահմանումներից, տեղեկատվական ռազմական գործընթացների մեջ կարեւորվում են ոչ միայն հարձակողական, այլ նաեւ պաշտպանողական բնույթի գործողությունները: ԱՄՆ-ը 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո բազմապատկել է իր ուշադրությունը տեղեկատվական ոլորտի պաշտպանության ուղղությամբ: Մասնավորապես 2001-ի հոկտեմբերին ԱՄՆ-ում ստեղծվեց մի կառույց, որը մասնագիտանում է այսպես կոչված *կիբերտարածության անվտանգությունն* ապահովելու ոլորտում: Պաշտոնապես այն կոչվում է «*Ենթակառուցվածքների կարեւորագույն օբյեկտների պաշտպանության խորհուրդ*»: Այդ ծառայության ղեկավար է նշանակվել Ռոբերտ Կլարկը, որն ունի կիբերտարածության անվտանգության գծով ԱՄՆ նախագահի հատուկ խորհրդականի կարգավիճակ: Կառույցի խնդիրն է հեռահաղորդակցային, էներգետիկայի, ֆինանսական ծառայությունների, ջրամատակարարման, շտապ օգնության, տրանսպորտի, առողջապահության եւ ազգային անվտանգության տեսակետից մնան այլ կարեւոր ծառայությունների տեղեկատվական համակարգերի պաշտպանությունը:

Սակայն, ըստ ամենայնի, տեղեկատվածին ամենամեծ վտանգները նրանք են, որոնք ի վիճակի են խեղաթյուրել անհատի կամ հասարակության մտավոր, արժեքային եւ հոգեւոր համակարգերը:

### **Երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներ**

Մարդու հոգեկանի եւ գիտակցության խեղաթյուրման մեթոդաբանությունը վերջին տարիներին մեծ «առաջընթաց» է ապրել: «ՌԵՆԴ» վերլուծաբանական կենտրոնի մասնագետների կողմից մշակվել է այսպես կոչված երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգը: Եվ եթե առաջին սերնդի տեղեկատվական պատերազմը դիտվում էր որպես կարեւոր բաղադրիչ ընդհանուր պատերազմի ավանդական միջոցների՝ միջուկայինի, կենսաբանականի եւ այլնի կողքին, ապա երկրորդ սերնդինը հանդես է գալիս լիովին ինքնուրույն կերպով:

Նոր սերնդի տեղեկատվական պատերազմի գաղափարական հայրերն այն համարում են ռազմավարական հակամարտության սկզբունքորեն նոր տիպ, որը կյանքի է կոչված «տեղեկատվական հեղափոխությամբ»: Տեղեկատվական տարածության մեջ են մտնում հակամարտության հավանական ոլորտները, առաջին հերթին՝ մարդու, հասարակության հոգեւորը եւ գիտակցությունը, ինչպես նաեւ տնտեսությունը: Այսպիսով՝ նոր սերնդի տեղեկատվական պատերազմները ընդգրկում են միա-

վորում են նաև հոգեբանական գործողությունների համախումբը: Ի թիվս խնդիրների, որոնք լուծվում են երկրորդ սերնդի տեղեկատվական զենքի միջոցով, առանձնացնենք հետևյալները.

– բարոյագուրկ, ոչ հոգեւոր մթնոլորտի եւ հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում,

– քաղաքական լարվածության ու քաոսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման եւ հասարակական գիտակցության մանիպուլյացիա,

– առձակատումների հրահրման, անվստահության, կասկածամտության սերմանման, քաղաքական պայքարի սրման նպատակով կուսակցությունների միջեւ քաղաքական հարաբերությունների ապակայունացում, ընդդիմության դեմ բռնությունների սադրում, փոխոչնչացման դրդում,

– իշխանության եւ կառավարման մարմինների լրատվական ապահովվածության մակարդակի իջեցում, կառավարման սխալ որոշումների ներշնչում,

– պետական մարմինների աշխատանքի մասին ապատեղեկատվություն, նրանց հեղինակազրկում, կառավարման մարմինների վարկաբեկում,

– սոցիալական, քաղաքական, ազգային եւ կրոնական բախումների հրահրում,

– կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների դժվարացում,

– պետության միջազգային հեղինակության զցում, այլ երկրների հետ նրա համագործակցության վնասում,

– քաղաքական, տնտեսական, պաշտպանական եւ այլ ոլորտներում պետության կենսականորեն կարեւոր շահերի վնասում:

Ներկայումս, համաձայն տեղեկատվական դաշտում հայտնված լուրերի, «ՌԵՆԴ»-ի մասնագետները աշխատում են երրորդ սերնդի «տեղեկատվական պատերազմների» հայեցակարգերի մշակման ուղղությամբ:

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ**

### **Արմեն Այվազյան**

#### ***Սփյուռքի հայապահպանման նպատակը***

Այսօր սփյուռքահայ կառույցների մեծ մասի օրակարգը ըստ էության սահմանափակվում է բավական նեղ մշակութային գործունեությամբ՝ հռչակված գլխավոր նպատակ ունենալով այսպես կոչված «հայապահպանումը»: Հայաստանում էլ շատերը Սփյուռքի գոյության իմաստը տեսնում են հայապահպանության մեջ: Բայց ի՞նչն է հայապահպանման նպատակը. ահա դա անհայտ է մնում: Արտերկրում հայապահպանումը դարձել է անիմաստ, ինքնանպատակ, ամորձատված գաղափար: Մինչդեռ հայապահպանումն իմաստ ունի միայն, եթե գալիս է օժանդակելու ազգային խնդիրների իրականացմանը: Պատմական այս ժամանակահատվածում այդ խնդիրներից են Հայաստանի պետության կայացումն ու ամրապնդումը, հայրենադարձությունը («հայահավաքը»), հայոց ոտնահարված ազգային իրավունքների պաշտպանությունը: Թեեւ պատմական այս պահին Արեւմտյան Հայաստանի ազատագրումը իրատեսական խնդիր դիտվել չի կարող, սակայն դա չի նշանակում, որ հայությունը եւ հատկապես Սփյուռքը պետք է մեկընդմիջտ հրաժարվեն հայրենատիրության գաղափարից:

*Սփյուռքահայության գոյապահպանման բուն նպատակը* սեփական հողերի վրա, անկախ պետականության հովանու ներքո վերամիավորվելն է, այսօր՝ այսօրվա Հայաստանում, հետագայում՝ նաեւ մեր Հայրենիքի ազատագրվելիք այլ հատվածներում<sup>1</sup>:

Հայապահպանումը իբրեւ ինքնանպատակ դիտելը (ինչպես անում է սփյուռքահայության զգալի մասը) կտրուկ թուլացնում է նույն հայապահպանման կարելորագույն տարրերը: Օտար կենսապայմանները սփյուռքահայի մեջ պարտադրաբար ծնում են «*Հանուն ինչի՞ հայ մնամ*», «*Հանուն ինչի՞ մտածեմ ու գործեմ հայկական խնդիրների վրա, որոնք կենսապայմաններիս բարելավմանն անմիջականորեն չեն նպաստելու*» հարցերը: Երբ չկա հայապահպանման բուն նպատակի գիտակցումը, սփյուռքահայի՝ ինքն իրեն եւ ուրիշներին տրվող պատասխանը դառնում է թերի՝ ի վերջո վերածվելով «*հայ մնալ հանուն հայ մնալու*» անհամոզիչ պատասխան-բանաձեւումի: Այս հարցադրումն անխուսափելի է, այլ բան է, որ սփյուռքահայության հայրենասեր մասը, լեցուն լինելով հայկականությամբ, այսինքն, նախ եւ առաջ՝ հայկական նպատակներով (այդ թվում՝ հայ սերունդ ժառանգելու եւ հայությանը նպաստ բերելու ցանկությամբ), իրենից կտրականապես վանում է «*հանուն ինչի՞ հայ մնալ*» հարցը: Սակայն, ցավոք, հաճախ նույնիսկ Սփյուռքի հայրենասեր հատվածի գա-

ղափարախոսությունից է դուրս մնում հայապահպանման բուն նպատակը՝ վատնելով նրանց ուժերը ժամանակավրեպ ու երկրորդական աշխատանքների վրա:

Գիտակցական եւ ենթագիտակցական մակարդակների վրա է գործում նաեւ *խաղաղ պայմանների պատրանքը*: Հայ-թուրքական օբյեկտիվ հակամարտության չտեսնելը թուլացնում է հայկական կողմին, ինչպես նաեւ հայապահպանման գործը, քանի որ ինքն իրեն «խաղաղ» պայմաններում պատկերացնող հայը չի գործադրում այն ջանքերն ու ճիգերը, որոնք բնական ու պարտադիր են պայքարի դաշտը տեսնող, զգացող եւ իրեն հենց այդտեղ պատկերացնող հայի համար: Խաղաղ պայմանների պատրանքը թմրեցնում եւ ուժգնորեն խախտում է հայ էթնիկական զգոնությունը, թերի կարեւորություն տալիս հայապահպանման գործին, ճանապարհի հարթում այնպիսի երեւույթների առջեւ, ինչպիսիք են խառնամուսնությունները, երեխաների անբավարար հայեցի դաստիարակությունը, հայրենադարձության կարեւորության անտեսումը եւ այլն:

### **Հայոց պատմական ցասումի զգացումը**

Գիտակցության տարբեր մակարդակներում է գործում նաեւ մի խիստ յուրահատուկ երեւույթ՝ հայոց ցասման կամ վրեժի զգացումը: Բանն այն է, որ յուրաքանչյուր հայրենազգաց հայ անհատ 1894-1922թթ. ցեղասպանությունից հետո ունեցել է զոհն մեկ անգամ առկայծած վրեժի ցանկություն<sup>2</sup>: Ճիշտ է՝ ամեն մեկն իր սեփական պատկերացումներն է ունեցել հայոց վրեժի մասին՝ սկսած պարզունակ, կրավորական երեւակայություններից, վերջացրած ռազմաքաղաքական կազմակերպությունների մշակած ու կիրառած ծրագրերով:

Հայոց ցասման հիմքում ընկած է ցավը ցեղասպանության զոհերի, վերապրողների տառապանքների, բնօրրան-հայրենիքի կորստյան համար: Ընդ որում՝ այս ցավի մերօրյա կրողն ականատես չի եղել այդ դեպքերին, նրա համար զոհերն անծանոթ ու հեռու անցյալում ապրած մարդիկ են: Հետեւաբար, թե ի՞նչ չափով այսօրվա հայը ցավ կզգա անցյալում Եղեռնի զոհ դարձած հայերի համար, կախված է նրանից՝ ի՞նչ չափով է նա նույնացնում իրեն հայ ազգի հետ, այսինքն՝ որքանով է իրեն միեւնույն միս ու արյուն զգում հայության հետ:

Եթե հայ անհատը չունի կամ մերժում է ցասման զգացումը, ուրեմն նրա հոգեբանական նույնացումը հայության հետ խզվել է, հայկականությունը՝ թուլացել, նա բարոյապես նահանջել է անարդարության ու բիրտ ուժի առջեւ, համակերպվել բնիկ բնօրրանի օտարացման եւ իր արյունակից նախնիների հանդեպ գործված աններելի ոճրագործության հետ:

Հայոց ցեղասպանությունը ծնել է նաեւ հայոց ցասման զգացման հակոտնյան՝ թուրքերի անհանգստությունը հայերի վրեժխնդիր լինելու վերաբերյալ, որը կարելի է անվանել պատմական վրեժխնդրության ենթարկվելու վախ: Նման մտավախություններ թուրքերը դրսևորել են

դեռեւս ցեղասպանության ծրագրման եւ իրականացման փուլում՝ նկատի առնելով հայերի վրիժապահանջ կամքը:

Քանի որ Հայոց ցեղասպանությունը չհասավ իր վերջնական նպատակին՝ հայերի իսպառ բնաջնջմանը եւ աշխարհի քարտեզի վրայից Հայաստանի վերացմանը, թուրքերի ընկալումներում *հայոց պարտությունը վերջնական չէ, եւ հայերը, նրանց կարծիքով, դեռ ռեւանջի հնարավորություն ունեն*: Վրեժխնդրության ենթարկվելու վախն, ըստ երեւույթին, ազդում է նաեւ թուրքերի ռազմավարական հաշվարկների վրա, մասնավորապես այն կասկածի, ըստ որի՝ եթե Հայաստանը մի օր դառնա տնտեսապես եւ ռազմականապես հզոր ու միջազգային ասպարեզում հարգված պետություն, այն առաջ կքաշի Հայոց ցեղասպանությունից բխող տարածքային, բարոյական, մշակութային, նյութական փոխհատուցման հարցեր:

Հայոց ցասումը համընկնում է արդարության մասին մարդկության ունեցած ամենահիմնական պատկերացումներին: «Վրեժի» կատեգորիան հատուկ հոգեբանական հետազոտության առարկա դարձրած ամերիկացի գիտնական Նիկո Ֆրիջդան հետեւյալ հանգուցային դիտողությունն է անում այդ զգացման էության մասին. «Վրեժի ցանկությունը բանական է այնքանով, որքանով այն վերականգնում է անվտանգությունը, եկամտունների հավասարությունը, իշխանության հավասարությունը, ինքնահարգանքն ու ինքնությունը, ինչպես նաեւ հասարակական գործարքների վերաբերյալ վստահությունը: ...Քաղաքակիրթ հասարակությունը պետք է ճանաչի վրեժի ցանկությունն այնպես, ինչպես այն կա՝ բնական մի զգացում, որը **բնական դարման է փնտրում անբնական հանցանքի միջոցով պատճառված անբնական տառապանքի համար**»: Ամերիկացի հեղինակն իրավացիորեն որպես վրեժխնդրություն է բնութագրում նաեւ 1970-80-ական թթ. թուրք դիվանագետներին ահաբեկելու հայոց գործողությունները:

\* \* \*

Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման ռազմավարական խնդիրը եւ բարոյական պարտականությունը առաջին հերթին դրված են հայության վրա, ընդ որում՝ անժամկետ եւ առանց նահանջի հնարավորության: Հայության հաղթանակը լինելու է ազգասպանները կանխող, դրանց հատուցման անժամանցելիությունը հաստատող կարեւոր մի երաշխիք, բարոյական լուրջ նվաճում ողջ մարդկության համար: Այդ հաղթանակի արդյունքում հայկական պետությունը ստանալու է կենսունակության եւ անվտանգության ամուր գրավականներ՝ տարածքային, նյութական, բարոյական եւ այլ կարգի փոխհատուցումների տեսքով:

Իսկ ներկայումս *հայոց ցասման* միակ ճիշտ արտահայտության ձեւ կարող է համարվել Հայրենիքի կառուցմանն ուղղված անդուլ աշխատանք-

քը, որի լավագույն մարմնացումը կլինի տնտեսապես ու ռազմականապես հզոր, իր պատմական արմատներին, էությանն ու ապագային հավատարմորեն կառչած Հայաստանը:

<sup>1</sup> Հայաստանում հայկական պետականության կործանումից ի վեր այս ճշմարտությունը գիտակցվել է միշտ: XVII-XVIII դարերում շրջանառության մեջ էր մի առանձին աղոթք. *«Մանավանդ ազգս հայկազյան՝ մեղքերի պատճառով անարժան դարձած է օտարացած, մեղքերի հողմով փոշու պես ցանուցիր եղած երկրի երեսին՝ օտարասեռ ազգերի եւ ցեղերի մեջ: Հայցում ենք ամենախնամ եւ ամենագութ Արարչից, որպեսզի կտրվածը դարձյալ բժշկի. եւ հոգու գրգանքով - իբրեւ թռչունը, որ ձագերին իր թևերի տակ է ժողովում - իր անրածածուկ աջով վերստին հավաքելով հայերին նրանց վիճակված սեփական, բնիկ եւ հայրենի երկրի ու գավառների մեջ, վերանորոգի այնպես, ինչպես ստեղծել էր ամենասկզբում՝ պանծալի փառքով եւ բարգավաճող արդյունքով: Ուժ տա, կազդուրի եւ հաստատահիմն դարձնի թագավորական ու հոգեւոր ինքնիշխանությամբ եւ ամեն տեսակ բարիքներով: Հաղթող եւ զորավոր դարձնի ճշմարտության բոլոր թշնամիների դեմ»:*

<sup>2</sup> Իրականում՝ հայերի մեջ օտար զավթիչների դեմ ուղղված վրեժի զգացումն առաջացել է պետականության կորստից անմիջապես հետո: Հիշատակենք ընդամենը մեկ օրինակ: 18-րդ դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման կենտրոնական գործիչ Հովսեփ Էմինը պատմում է, որ իր պապը, որն իրանական բանակում ուներ հազարապետի պաշտոն, մահանալուց առաջ իր ավագ որդուն դիմում է այսպիսի խոսքերով. *«Սա է իմ սիրեցյալ զավակը, նրան է ժպտալու նախախնամությունը, նրա արու որդին, որին մկրտելու են իմ անունով՝ Էմին, Աստծո օգնությամբ բարձրացնելու է պաշտպանության սուրը, լուծելու համար վրեժը իր հայրենիքի դատի ու իր նախահայրերի արյան, որ թափվեց հանուն ճշմարտության ու քրիստոնեության ամենասրբազան ուղիի մեջ»:*

**ՀԱՅ-ԹՈՒՐԷԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
*Դավիթ Մելիք-Նազարյան*

Հայ-թուրքական պաշտոնական հարաբերություններն առայսօր մնում են չկարգավորված: Ո՞րն է Հայաստանի հետ հարաբերությունների հաստատման հարցում Թուրքիայի անփոփոխ բացասական կեցվածքի պատճառը:

Թվում է, թե Հայաստանի առաջին նախագահի քաղաքականությունը Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում բավականին զուսպ էր եւ հնարավորություն էր տալիս մեր հարեւան երկրի ղեկավարությանը, քաղաքական «պրագմատիզմ» ցուցաբերելով, դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի նորանկախ պետության հետ, սահմանները բացել, ակտիվ առեւտրատնտեսական կապեր ստեղծել եւ այդ ճանապարհով ամրապնդել իր ներկայությունը մեր երկրում դրանից բխող բոլոր հետեւանքներով՝ քաղաքական ազդեցություն, մշակութային եւ քաղաքակրթական թափանցում եւն:

ՀՀ երկրորդ նախագահը, կոշտացնելով երկրի դիրքորոշումը Ցեղասպանության հարցում եւ վերջինիս միջազգային ճանաչումը դարձնելով հայկական արտաքին քաղաքականության առաջնային խնդիրներից մեկը, միաժամանակ կատարեց աննախադեպ քայլ. հայտնի թուրք լրագրող Մեհմետ Ալի Բիրանդին տված բացառիկ հարցազրույցի ընթացքում նա հայտարարեց, որ Հայաստանը Թուրքիայի նկատմամբ Ցեղասպանության եւ դրա հետեւանքներից բխող որեւէ տարածքային կամ այլ տիպի պահանջ չունի: Հայտարարություն, որից հետո փաստորեն պետք է որ փարատվեին թուրքական քաղաքական եւ ռազմական ղեկավարության բոլոր մտահոգությունները՝ իրենց երկրի տարածքային ամբողջականության հանդեպ հայերի հնարավոր ոտնձգությունների հետ կապված:

Սակայն Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցը պայմանավորում է մեր եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմամբ: Սա այն դեպքում, երբ Թուրքիան ակտիվ հարաբերություններ ունի մի շարք երկրների հետ, որոնց հետ գոյություն ունեն բազմաթիվ վիճելի հարցեր, այդ թվում՝ տարածքային (օրինակ՝ Հունաստանի, Սիրիայի, Իրանի եւ այլն):

Այստեղից՝ հնարավոր միակ տրամաբանական եզրահանգումը. Թուրքիան Հայաստանը չի դիտարկել որպես մի պետություն, որի հետ, այլոց շարքում, կարելի է կարգավորել եւ քայլ առ քայլ բարելավել հարաբերությունները, կառուցել համատեղ անվտանգության համակարգ, համագործակցել սահմանային գոտում, միասնաբար մասնակցել տարածաշրջանային հարցերի լուծմանը եւ այլն: Այսինքն՝ Հայաստանը թուրքական չա-

փանհիշներով չի համապատասխանում «նորմալ» երկրի ստանդարտներին: Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդիրը կարող է դրվել միայն որոշակի իրադարձությունների ավարտից հետո, որոնց արդյունքում տեղի կունենան այնպիսի փոփոխություններ, որոնք կհամապատասխանեցնեն մեր երկիրը այդ ստանդարտներին: Որո՞նք են այդ իրադարձությունները, եւ ի՞նչ փոփոխություններ պետք է տեղի ունենան:

\* \* \*

1992թ. ապրիլին Ուզբեկստանում կայացած թուրքալեզու պետությունների առաջին զագաթաժողովին արտասանած իր ելույթում Թուրքիայի նախագահ Թ. Օզալն ասաց, որ XXI-րդ դարը թուրքերի դարն է լինելու, եթե սխալներ չկատարվեն: 90-ական թվականներին նման հայտարարություններ հաճախ էին հնչում: Հատկանշական է Թուրքիայի հաջորդ նախագահի՝ Ս. Դեմիրելի այն միտքը, որ թուրք լինելով անհնար է հրաժարվել պանթուրքիզմից, սակայն իրատեսության սահմանները չանցնելով: «Եթե հետագայում ստեղծվի թուրքական պետությունների միություն, ապա ոչ ոք դեմ չի լինի, սակայն այսօր սա անհավանական է», - ասել է նա: Այս եւ նման հայտարարություններից ակնհայտ է դառնում Թուրքիայում իշխող քաղաքական շրջանակների նեոպանթուրքիստական որոշ ուղղվածությունը, որքան էլ որ այն թաքնված լինի արեւմտյան հնչեղություն ունեցող քաղաքական բառամթերքի տակ:

Այսպիսի ձեւակերպումները 90-ականներին լավ արձագանք էին գտնում Արեւմուտքում, որի քաղաքական առաջնորդները ակտիվորեն զովագոյում էին Թուրքիայի կերպարը՝ որպես առաջադեմ, ժողովրդավարական արժեքների համակարգի վրա կառուցված, աշխարհիկ մուսուլմանական պետություն, որի քաղաքական եւ հասարակական համակարգը պետք է օրինակ ծառայի նորանկախ մուսուլմանական պետությունների համար: Մեծ Բրիտանիայի վարչապետ Մ. Թետչերը կարեւորում էր Թուրքիայի դերը եւս մեկ առումով: 1993թ. իր մի ելույթում նա բնութագրեց Թուրքիան՝ որպես հեղափոխական արաբական ազգայնականության եւ ազրեսիվ մուսուլմանական արմատականության դեմ կանգնած ամրոց:

Արեւմտյան «հետսառըպատերազմական» նման մոտեցումները համընկնում էին Թուրքիայի վարած քաղաքականության հետ եւ նպաստում, որպեսզի այն, մրցակցության մեջ մտնելով Ռուսաստանի հետ, ձգտի վերակողմնորոշել նախկին խորհրդային թուրքալեզու պետությունները, ինչը պետք է նպաստեր «մի օր թուրքական պետությունների միության ձեւավորմանը», ինչպես նաեւ նեոպանթուրքիստական նպատակների իրականացմանը:

Հերթական անգամ միակ խոչընդոտն այս նպատակների իրականացման համար, որոնց կարելի էր բաղադրյալը պետք է դառնար նաեւ ցամաքային կապը Ռուսաստանի Դաշնության մեջ մտնող Հյուսիսային Կովկասի եւ Վոլգայի ավազանում գտնվող թուրքալեզու հանրապետու-

թյունների հետ, Հայաստանն էր: Այս կապն անհրաժեշտ էր՝ Խորհրդային Միության քայքայումից հետո թուլացած Ռուսաստանում տեղի ունեցող դեզինտեգրացիոն գործընթացների խթանման եւ նրա հետ արդյունավետ մրցակցության ապահովման համար: Արդեն 1997թ. Թուրքիայի ԱԳՆ Կենտրոնական Ասիայի, Կովկասի, սլավոնական երկրների եւ Մոնղոլիայի դեպարտամենտի պետ Հալիլ Աքնջըն հայտարարել էր. «Քաղաքական բենահարթակի վրա տեղի ունեցած արմատական փոփոխությունները ոչ միայն մղեցին Թուրքիան Եվրասիայի էպիկենտրոնում առաջատար ռազմավարական դիրքերի, այլ նաեւ նոր եւ առաջատար դեր ուրվագծեցին նրա համար այս ընդարձակ աշխարհագրական տարածքում: Ներկայումս Թուրքիան պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի միաժամանակ մի քանի ուղղությունների վրա՝ եվրոպական ինտեգրացիայից եւ վերջինիս անվտանգության նոր ճարտարապետությունից մինչեւ Կովկասում եւ Միջին Ասիայում թյուրքական ծագում ունեցող պետությունների գոտու ձեւավորում»:

90-ականների ընթացքում Թուրքիայի նման դիրքորոշումն արտահայտող քաղաքական գործիչների եւ դիվանագետների հայտարարություններին կարելի է ավելացնել Անկարայի ակտիվ գործողությունները բոլոր թուրքաբնակ կոնֆլիկտային գոտիներում՝ սկսած Բոսնիայից եւ Կոսովոյից, վերջացրած հյուսիսկովկասյան հանրապետություններով:

Հայաստանի ներկայությունը թույլ չէր տալիս իրականացնել պանթուրքիստական ծրագիրը՝ ցամաքային կապի հաստատումը: Միաժամանակ Թուրքիայի համար հասկանալի էր, որ XXI-րդ դարի նախօրեին «Հայկական հարցը» հնարավոր չի լինի լուծել այնպես, ինչպես երիտթուրքերը փորձեցին այն լուծել XX-րդ դարի սկզբին: Հարցը կարելի կլիներ լուծել ոչ թե ընդհանրապես Հայաստանի վերացման ճանապարհով, այլ նրա տարածքի այն մասի, որը կապահովեր բաղձալի ցամաքային միջանցքը Ադրբեջանի կամ Թուրքիայի տարածքին միացնելով: Այս ամենի համար թուրքական ղեկավար քաղաքական շրջանակները պետք է նախ ընդգրկված լինեին դարաբաղյան կոնֆլիկտի մեջ, ինչը նրանց հարմար առիթ կընձեռներ հասնելու իրենց նպատակին, եւ, բացի այդ, *հարաբերությունները Հայաստանի հետ չպետք է կարգավորվեին՝ երկու երկրների միջեւ լարվածության բարձր մակարդակի պահպանման եւ հակահայաստանյան ցանկացած տիպի գործողությունների քաղաքական հիմնավորումն ապահովելու հեռահար նպատակով*: Միայն այս ամենը իրականացնելուց հետո կարելի կլիներ կարգավորել հարաբերությունները արդեն բոլորովին «անհետաքրքիր» դարձած եւ իր աշխարհաքաղաքական դերը կորցրած Հայաստանի մնացորդի հետ:

\* \* \*

Սակայն իրադարձություններն այլ կերպ զարգացան: Հայկական բանակի հաղթանակը Արցախյան պատերազմում եւ ռուսական ռազմա-

կայանի տեղակայումը մեր երկրի տարածքում՝ մի կողմից, ընդհանուր աշխարհաքաղաքական տեղաշարժերը եւ միաբեւեռ աշխարհի ձեւավորումը՝ մյուս կողմից, անհրակամանալի դարձրին 90-ականներին փայփայլած նեոպանթուրքիստական նպատակները:

Ստեղծվեց այնպիսի իրավիճակ, որ նախ՝ Միացյալ Նահանգների նպատակների իրականացման համար կարելուովեց հայ-թուրքական հարաբերությունների հիմնահարցի կարգավորումը, որի արդյունքը կլիներ Հարավային Կովկասի երկրների քաղաքական միատարրության ձեռքբերումը (եթե վերանում է Թուրքիայի վտանգը, ապա այլեւս անհրաժեշտություն չկա ռուսական ռազմակայանի մեր տարածքում գտնվելու, եւ, բացի այդ, եթե թուրքական քաղաքականությունը դարաբաղյան հարցում ավելի հավասարակշռված լինի, ապա խաղաղ միջոցներով այն լուծելու հավանականությունը կտրուկ աճում է):

Մյուս կողմից, սեպտեմբերի 11-ից հետո Միացյալ Նահանգներն ապահովեց իր ուղղակի ռազմական ներկայությունը միջինասիական հանրապետություններում, ինչը նշանակում է, որ ամերիկացիները, զնահատելով թուրքական միջինասիական քաղաքականության ոչ թե արեւմտակենտրոն, այլ թուրքակենտրոն լինելը, որոշեցին արդեն անմիջականորեն իրականացնել իրենց քաղաքականությունն այս տարածաշրջանում:

Վերջապես Ռուսաստանը, դուրս գալով խոր ճգնաժամից եւ ճշտելով ԱՄՆ-ի եւ Եվրամիության հետ իր քաղաքականությունը, գործելակերպի ազատություն ձեռք բերեց Հյուսիսային Կովկասում, մասնավորապես՝ Չեչնիայում, ինչը թույլ տվեց բացառել արտաքին ազդեցությունը ՌԴ-ի այս մասում:

Վերը նշված հանգամանքները, ինչպես նաեւ Միացյալ Նահանգների քաղաքական միտվածությունը՝ ամրապնդվելու Հարավային Կովկասի տարածաշրջանում, նոր համատեքստ ձեւավորեցին հայ-թուրքական հարաբերությունների համար:

Սակայն Թուրքիան շարունակում է իրականացնել Հայաստանի ցամաքային շրջափակման քաղաքականությունը, նրա պաշտոնական դիրքորոշումները Լեռնային Ղարաբաղի հարցում եւ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ վերանայման չեն ենթարկվել:

Այս տեսակետից հետաքրքրական է վերջին շրջանում որոշակի աղմուկ հանած Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի գործունեությունը, որի ձեւավորումը Հայաստանում ոչ միանշանակ ընդունելություն գտավ:

Հաշվի առնելով Թուրքիայի պաշտոնական իշխանությունների պարտավորեցնող քաղաքական հայտարարությունները՝ ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի անմիջական նախաձեռնությամբ գործի դրվեց այսպես կոչված «second track»-ի բանակցային տեխնոլոգիան, որի էությունն այն է, որ հակամարտող երկրների հասարակական եւ քաղաքական շրջանակների մի շարք հեղինակավոր ներկայացուցիչներ չպարտավորեցնող,

սակայն սկզբունքային քննարկումներ են իրականացնում, որոնց ընթացքում ամենակարեւոր արմատական հիմնախնդիրների լուծման կամ կարգավորման ուղիներ գտնելու փորձ է կատարվում: «Second track»-ի շրջանակներում իրականացված բանակցությունները հաջողությամբ են պսակվել աշխարհի տարբեր հակամարտությունների լուծման ժամանակ:

Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը ստեղծվել է այս տեսլանով գիտյի տրամաբանության շրջանակներում: Այս տարվա սկզբին հանձնաժողովի խնդրանքով հրապարակվեց «Անցումային արդարության միջազգային կենտրոն» (ԱԱՄԿ) հեղինակավոր միջազգային կազմակերպության կողմից իրականացված վերլուծությունը, որը վերաբերվում էր Հայոց ցեղասպանության իրավական մեկնաբանությանը: Հրապարակված վերլուծության համաձայն՝ XX-րդ դ. սկզբին տեղի ունեցած իրադարձությունների հատկանիշները համապատասխանում են ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման եւ պատժման կոմպենցիայով նախատեսվող չափանիշներին, ուստի այդ իրադարձությունները որակվում են որպես ցեղասպանություն:

Այս իրադարձության նշանակությունը, ըստ մեզ, շատ կարեւոր է. առաջին անգամ հայ եւ թուրք քաղաքական գործիչները, բարձրաստիճան դիվանագետները եւ հեղինակավոր մտավորականները միասնականորեն դիմել են երրորդ կողմի՝ երկու երկրների հասարակություններն իրարից բաժանող արմատական հիմնահարցի գնահատականը ստանալու համար, եւ այդ երրորդ կողմը անվերապահորեն հաստատել է, որ իրավական տեսակետից տեղի ունեցածը ցեղասպանություն է:

Փաստն ինքնըստինքյան շատ կարեւոր լինելով՝ ավելի կարեւոր հետեւությունների տեղիք է տալիս: Նախ, ակնհայտ է, որ եթե չլիներ Միացյալ Նահանգների շահագրգիռ մասնակցությունը, նման հանձնաժողովի նույնիսկ ստեղծմանը թուրքական կողմը ուղղակի չէր համաձայնվի: Առավել եւս անհնար կլիներ հարցը քննելու խնդրանքով նման միասնական դիմումը «ԱԱՄԿ»-ին: Կարեւոր է նաեւ հանձնաժողովում Ռուսաստանի միջնորդավորված մասնակցությունը:

Վերոշարադրյալի հիման վրա՝ էական է դառնում ներկա փուլում քաղաքական վեկտորների ուղղվածության ճիշտ գնահատականի խնդիրը:

Իսլամականների իշխանության գալը եւ Իրաքի շուրջ ստեղծված քաղաքական մթնոլորտի ազդեցությունը որոշ խնդիրներ են առաջացրել երկու դաշնակիցների՝ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի հարաբերություններում:

Ներկա այս իրավիճակում հայ-ամերիկյան հարաբերությունները ձեռք են բերում լրացուցիչ կարեւորություն: Ակնհայտ է, որ Անկարան, մնալով Միացյալ Նահանգների ռազմավարական դաշնակից, ՆԱՏՕ-ի անդամ պետություն է տարածաշրջանի կարեւորագույն երկրներից մեկը, ջանք չի խնայի Վաշինգտոնի հետ հարաբերությունների իր ավանդական մակարդակը վերականգնելու համար: Այս պայմանները եւ այս ժամանակաշրջանը գուցե եւ բացառիկ հնարավորություններ են ստեղծում Հայաստա-

Ուի ազգային անվտանգության ամենակարեւոր խնդիրներից մեկի՝ հայ-թուրքական հարաբերությունների որոշ հարցերի կարգավորման համար՝ առանց Թուրքիայի կողմից առաջ քաշված, մեր ազգային շահերին հակասող նախապայմանների:

## **ԻՐԱՔՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ**

### **Սարգիս Հարությունյան**

Իրաքյան ներկայիս ճգնաժամում աստիճանաբար ավելի մեծ տեղ է գրավում քրդական գործոնը: Ճգնաժամի շուրջ ընթացող գործընթացներում սկզբնապես հանդես գալով որպես օբյեկտ՝ քրդական գործոնը հետզհետե ձեռք է բերում գործընթացների մաս կազմող սուբյեկտի կարգավիճակ: Դեռ ավելին, առկա է հստակ պատկերացումն այն բանի, որ քրդական գործոնը կարող է դառնալ մերձավորարեւելյան միջազգային հարաբերությունների կարեւորագույն սուբյեկտներից մեկը՝ շնորհիվ իր ոչ օրդինար լինելու, ագրեսիվության, ուստի եւ՝ անկանխատեսելիության:

Այս առումով քրդական գործոնը ներկայացնում է լրացուցիչ կարեւորություն՝ թե՛ տեսական ուսումնասիրության, թե՛ գործնական քաղաքականության մշակման տեսանկյունից: Հայաստանի Հանրապետության դիտակետից այդ գործոնը արժեւորվում է նաեւ այն առումով, որ մեր անմիջական հարեւան երկու երկրները (Թուրքիա, Իրան) արդեն իսկ գտնվում են քրդական գործոնի ճնշմամբ պայմանավորված որոշակի գործընթացների ազդեցության ոլորտում, ինչն էլ իր հերթին չի կարող չհանդարտառնալ մեր երկրի արտաքին քաղաքականության տրամաբանության վրա:

Ինչպես հայտնի է, ներկայումս քրդերը հավաք կերպով բնակվում են Թուրքիայի, Իրանի, Իրաքի եւ Սիրիայի տարածքներում: Այդ երկրներում նրանց թվաքանակը միջինը գնահատվում է 25 մլն մարդ: Քրդերի մեծ մասը (շուրջ 75%) դավանում է սուննի մահմեդականություն, հաջորդ մեծաքանակ խումբը շիա քրդերն են, կան ալավի, ինչպես նաեւ քրիստոնյա քրդեր:

#### **Քրդերը Իրաքում**

Հարաբերությունները Իրաքի կենտրոնական կառավարության եւ տեղի քրդերի միջեւ, ըստ էության, միշտ էլ աչքի են ընկել լարվածությամբ: Թեեւ դեռեւս 1970թ. Բաղդադը պաշտոնապես ճանաչեց քրդերի իրավունքը ինքնավարության հարցում, իսկ չորս տարի անց այդ իրավունքը տրվեց նրանց, սակայն իրականում քրդական ինքնավարությունը (որի ընդունման ժամանակ քրդերի կարծիքը հաշվի չառնվեց) բազմիցս ոտնահարվում էր. ընթանում էր քրդերի բռնի արաբացում, Մոսուլ եւ Քիրքուկ քաղաքներից նրանց տեղահանում, ջարդեր (բավականին աղմուկ բարձրացրեց 1988թ. մարտին Բաղդադի կողմից քիմիական զենքի օգտագործումը քրդաբնակ Խալաբջի քաղաքի դեմ, որի արդյունքում, ըստ պաշտոնական տվյալների, զոհվեց ավելի քան 5000 մարդ):

Քրդերի վիճակը էականորեն փոխվեց 1990-1991թթ. Պարսից ծոցի պատերազմից հետո, երբ Սադամ Հուսեյնի վարչակազմը պարտություն կրելով՝ սկսեց խարխլվել: Աստիճանաբար Բաղդադի վերահսկողությունից սկսեցին դուրս գալ Հյուսիսային Իրաքի քրդաբնակ շրջանները, ինչին նպաստում էր անգլո-ամերիկյան քաղաքականությունը: 1993-ից նրանց կողմից Իրաքի հյուսիսի եւ հարավի համար «ոչ թռիչքային գոտիների» սահմանումը (ընդ որում՝ առանց ՄԱԿ-ի թույլտվության) նպատակ ուներ խրախուսելու այդ շրջանների փաստացի անջատումը Բաղդադից:

Ըստ էության, 1990-ական թթ. սկզբից քրդերը ստացան բավականին լայն հնարավորություններ իրենց ապագայի կերտման գործում: 1992թ., պատմության մեջ առաջին անգամ, անցկացվեցին «Անկախ Քուրդիստանի» խորհրդարանի ընտրություններ, եւ ձեւավորվեց կառավարություն: Տեղի ունեցավ շատ էական մի գործընթաց. քրդերը բավականին շուտ հասկացան, որ դաշտային հրամանատարների ինստիտուտից պետք է անցում կատարել դեպի քաղաքական լիդերության ինստիտուտ, որի արդյունքում Հյուսիսային Իրաքում (Հարավային Քուրդիստան) ձեւավորվեցին երկու խոշոր քրդական կուսակցություններ՝ «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցություն» (ՔԴՄ-նախագահ՝ Մասուդ Բարզանի) եւ «Քուրդիստանի հայրենասիրական միություն» (ՔՀՄ-նախագահ՝ Ջալալ Թալաբանի): Գործնականում Հարավային Քուրդիստանը բաժանվեց երկու գոտու՝ ՔԴԿ-ի գոտի (Էրբիլ եւ Դոհուք քաղաքների շրջաններ) եւ ՔՀՄ-ի գոտի (Սուլեյմանիա քաղաքի շրջան): Ներկայումս քրդական այդ երկու կուսակցությունների միջեւ բանակցություններ են ընթանում մեկ ընդհանուր վարչակազմի ձեւավորման եւ խորհրդարանական նոր ընտրությունների անցկացման շուրջ, որոնք հատկապես կարելի էրվում են Սադամ Հուսեյնի վարչակարգի անկումից հետո:

### **Ի՞նչ են ցանկանում իրաքյան քրդերը**

Ի տարբերության «Քրդական բանվորական կուսակցության» (ՔԲԿ-ՔԿԿ), որը փաստորեն ներկայումս վերանվանվել է «Քուրդիստանի ազատության եւ ժողովրդավարության վեհաժողովի» (KADEK), Հյուսիսային Իրաքում գործող քրդական վերոհիշյալ երկու կուսակցությունները (ՔԴԿ եւ ՔՀՄ) բացահայտ կերպով չեն պաշտպանում քրդական անկախ պետության գաղափարը: Այս առումով, նույնիսկ հակասություններ առաջացան ՔԲԿ-ի (որը, հիշեցնենք, 1984-1999թթ. զինված պայքար էր մղում Թուրքիայի հարավ-արեւելյան նահանգներում «Անկախ Քուրդիստանի» հիմնադրման համար) եւ ՔՀՄ-ի ու ՔԴԿ-ի միջեւ: Հատկապես վերջինիս հարաբերությունները Անկարայի հետ նույնիսկ կարելի է ջերմ համարել. ՔԴԿ-ի առաջնորդ Մասուդ Բարզանին հաճախ է այցելում թուրքական մայրաքաղաք՝ խորհրդակցությունների: Անհրաժեշտ է նշել, որ թե՛ ՔԴԿ-ում, թե՛ ՔՀՄ-ում քաջ գիտակցում են, որ բարձրաձայն խոսակցություններն «Անկախ Քուրդիստանի» մասին կարող են միայն գրգռել հարեւան

Սիրիային, Թուրքիային եւ Իրանին, էլ չասած այն մասին, որ դրանք կարող են փայլուն առիթ հանդիսանալ Անկարայի համար՝ գործեր մտցնելու Յուսիսային Իրաք: Ուստի եւ խոսքը գնում է միայն դաշնային (federal) Իրաքի կազմում որպես սուբյեկտ հանդես գալու մասին:

Այդուհանդերձ, իրաքյան քրդերի անկախական նկրտումները չէին կարող չնկատվել, եւ Իրաքի հետ հարաբերություններում քրդական գործոնը սկսեց կիրառվել որպես ճնշամիջոց պաշտոնական Բաղդադի վրա: Նախ այդ լծակն օգտագործվեց իրանա-իրաքյան պատերազմում (1980-1988թթ.), երբ իրանական հետախուզությանը հաջողվեց խլրտումներ առաջ բերել Յուսիսային Իրաքի քրդաբնակ շրջաններում:

Պարսից ծոցի պատերազմի ժամանակ եւ հատկապես դրանից հետո քրդական գործոնին սկսեցին մեծ տեղ հատկացնել նաեւ Վաշինգտոնում եւ նրա դաշնակից երկրների մայրաքաղաքներում: 1991-ից այս կողմ, այսինքն՝ այն ժամանակվանից, երբ Բաղդադը de facto կորցրեց իր վերահսկողությունը հյուսիսիրաքյան քրդաբնակ շրջանների նկատմամբ, ամերիկյան, բրիտանական, մասամբ նաեւ իսրայելական հատուկ ծառայությունները ծավալեցին բավականին ակտիվ աշխատանք քրդական վարչական միավորների, իսկ ամենագլխավորը՝ քրդական զինված ուժերի կայացման գործում: Եթե չլիներ Թուրքիայի դիմադրությունը, դժվար է կանխատեսել, թե ինչ մակարդակի կհասներ այդ օգնությունը:

Սկսած 2002թ. հոկտեմբերից՝ քրդական բանազնացները ամենահաճախ ընդունվող հյուրերն էին Վաշինգտոնում: ԱՄՆ մայրաքաղաք այցելեցին եւ Բուշ-կրտսերի վարչակազմի անդամների հետ հանդիպումներ ունեցան նաեւ Ջալալ Թալաբանին (ԶՅՍ) եւ Սասուդ Բարզանին (ԲԴԿ): Ամերիկա-քրդական հարաբերությունների աշխուժացումն ուներ բավականին պարզորոշ նպատակ՝ օգտագործել քրդաբնակ շրջանների տարածքը եւ ռազմուժը Բաղդադի դեմ հյուսիսային ճակատի բացման համար (ակնհայտորեն այստեղ հաշվարկը կատարվում էր՝ ելնելով Աֆղանստանի փորձից, որտեղ թալիբների դեմ մեծ հաջողությամբ գործեց այսպես կոչված «Յուսիսային դաշինքը»՝ իր գորամիավորներով): Քրդական գործոնի կապակցությամբ ամերիկյան պատկերացումները նպատակաուղղված էին նրան, որ Սադամ Հուսեյնին ընդդիմադիր արաբ քաղաքական ուժերը, որոնք համախմբված են «Իրաքի ազգային ասամբլեա» կազմակերպության ներքո, իրաքցի շիաները եւ հյուսիսիրաքյան քրդերը հանդես գան մեկ միասնական ճակատով, որն էլ, թերեւս, կազմելու է ապագա դաշնային Իրաքի քաղաքական բուրգը:

Փաստորեն ամերիկացիների ռազմական հաշվարկները քրդական ինքնավարության քաղաքական նպատակների հետ եւ այս առումով՝ ամերիկա-քրդական հարաբերությունները ձեռք բերեցին նոր որակ: «Քրդերը կողջունեն ամերիկյան զորքերի ներկայությունը, որոնք կպաշտպանեն իրենց ազատությունը եւ կկանխեն զանգվածային ոչնչացման զենքի կիրառումը: Քուրդ ազգաբնակչությունը այս կարծիքին է այն բանից հետո,

երբ 1991թ. ամերիկացիները փրկեցին իրենց դժբախտությունից եւ զանգվածային արտաքսումից: Ամերիկացիների նկատմամբ քրդերի այդչափ լիբերալ վերաբերմունքն ունի իր բացատրությունը՝ դա «անվտանգության գոտիների» նրանց [ամերիկացիների] կողմից օդային պաշտպանությունն է, որը պաշտպանում է քրդական շրջանների ազատությունը՝ երաշխավորելով մշակութային, սոցիալական եւ տնտեսական զարգացումը իրաքյան Քուրդիստանում», - արաբական «Շարք Ալ-Աուսաթ» թերթի մարտի 4-ի համարում, իր հարցազրույցում նշել է ՔՀՄ առաջնորդ Ջալալ Թալաբանին:

### **Թուրքիան եւ Հյուսիսային Իրաքը**

Հյուսիսային Իրաքի խնդիրը Անկարայում բավական լուրջ է ընկալվում: Այդ խնդրի կարեւորության գիտակցումն այն աստիճանի է հասել, որ ներկայումս նկատվում է բավականին աննախադեպ մի երեւույթ՝ թուրքական զինվորական հրամանատարության եւ փաստացի իսլամական արմատներ ունեցող քաղաքական իշխանության դիրքորոշումների մեկտեղում, որոնց հետ միակարծիք է նաև թուրքական ընդդիմությունը: Ըստ էության, Հյուսիսային Իրաքում Անկարայի մտահոգություններն առնչվում են երեք գործոնի հետ՝ քրդական, տնտեսական (նավթ) եւ աշխարհաքաղաքական:

Քրդական գործոնը, բնականաբար, ամենասուրն է Թուրքիայի համար: Այն ունի անհրաժեշտ ներուժ՝ թուրքական պետության հիմքերը խարխուլելու, եւ դա էր գլխավոր պատճառներից մեկը, որպեսզի Անկարան մերժեր Վաշինգտոնին՝ Իրաքին հարվածելու համար ռազմական հեռակետերի տրամադրման հարցում: Խնդիրն այն է, որ Թուրքիան պահանջում է հստակ երաշխիքներ քրդական անկախ պետության ստեղծման դեմ, իսկ այդպիսի երաշխիքներ տեսնում է միայն սեփական զինված ուժերը Հյուսիսային Իրաք ուղարկելու մեջ: Պետք է նշել, որ Հյուսիսային Իրաքում Անկարան իր զինված ուժերը պահում է 1991թ. ի վեր, որոնց թվաքանակը գնահատվում է մոտ 3 հազար սվին: Ներկայումս խոսքը գնում է այդ թվաքանակի ավելացման շուրջ (մինչեւ 17 հազար սվին եւ տանկային մեկ դիվիզիա՝ 70 տանկ): Առաջադրանքի իրականացումը դրվել է թուրքական 2-րդ բանակի վրա, որի շտաբ-կայանը գտնվում է Մալաթիա քաղաքում եւ որը պատասխանատու է թուրք-իրաքյան շուրջ 400 կմ-ոց սահմանի պաշտպանության համար: Այդ նպատակով թուրքական Խաբուրի եւ Նուսայբինիայի շրջաններում արդեն իսկ ստեղծվել են թիկունքային աջակցության անհրաժեշտ կենտրոններ, իսկ ծանր զրահատեխնիկան մոտեցվել է սահմանին: Անկարան հայտարարում է, որ կարիք ունի ստեղծելու 20 կմ-ոց «բուֆերային գոտի», որպեսզի, ըստ պաշտոնական աղբյուրների, «կանխվի մեծաքանակ փախստականների եւ նրանց հետ միասին PKK-ի ահաբեկիչների մուտքը Թուրքիա, ինչը տեղի ունեցավ 1991թ. Պարսից ծոցի պատերազմի ժամանակ»:

Հասկանալի է, որ թուրքական անմիջական ազդեցության հաստատումը Հյուսիսային Իրաքում հղի է այնտեղ ամերիկյան ազդեցության սահմանափակմամբ: Այս ամենին գումարվում է նաև Մոսուլ-Քիրքուկ շրջանների նավթի (ողջ իրաքյան նավթի պաշարների 1/3-րդը) հետագա ճակատագրի հարցը:

Արձագանքը Վաշինգտոնից չուշացավ: Մարտի 21-ին ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը եւ պետական քարտուղար Քոլին Փաուելը, իսկ մարտի 23-ին նախագահ Ջորջ Բուշ-կրտսերը հայտնեցին իրենց դժգոհությունը՝ կապված Հյուսիսային Իրաք ներխուժելու թուրքական ծրագրերի հետ: «Մենք հստակ ուղեորձ ենք հղել թուրքական կողմին, որ նպատակահարմար չենք համարում թուրքական զորքերի մուտքը Հյուսիսային Իրաք», - նշել է ԱՄՆ նախագահը: Թուրքական կողմը եւս հանդես եկավ հայտարարություններով. մարտի 24-ին Թուրքիայի նորընծա վարչապետ Ռեջեփ Էրդողանը, թուրքական բանակի գլխավոր շտաբի պետ Հիլմի Օզքոչը եւ ընդդիմադիր «Հանրապետական ժողովրդական կուսակցության» առաջնորդ Դենիզ Բայքալը նշեցին Անկարայի ինքնուրույնության իրավունքը՝ Հյուսիսային Իրաք գորք մտցնելու հարցում:

Թուրք-ամերիկյան նոր որակի հակասությունները մեղմելու եւ այդ կապակցությամբ լարվածությունը Հյուսիսային Իրաքում թուլացնելու նպատակով, արդեն մարտի 25-ին Անկարայում էր Ջորջ Բուշ-կրտսերի «ազատ քրդերի գծով» հատուկ բանազնաց Ջալմայ Խալիլզադը: Թուրքիայի արտգործնախարար Գյուլի եւ այլ պաշտոնատար անձանց հետ նրա հանդիպումներից հետո տեղեկություն տարածվեց, թե սպասվում է, որ կողմերը կնքելու են հատուկ մի տեխնիկական համաձայնագիր, որտեղ գրի են առնվելու Հյուսիսային Իրաք թուրքական ներխուժման մանրամասնությունները եւ պայմանները: Մարտի 28-ին Խալիլզադը մեկնեց Հյուսիսային Իրաք՝ տեղի քուրդ առաջնորդների հետ քննարկելու վերոհիշյալ հարցը:

Խալիլզադի այցին հաջորդեց ԱՄՆ պետքարտուղար Փաուելի ժամանումը Թուրքիայի մայրաքաղաք: Ապրիլի 2-ին նա հանդիպումներ ունեցավ արտգործնախարար Գյուլի, վարչապետ Էրդողանի, նախագահ Սեզերի եւ գլխավոր շտաբի պետ Օզքոչի հետ: Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, Թուրքիան ԱՄՆ-ին թույլատրեց իր տարածքով մատակարարումներ (զինտեխնիկա, վառելիք, սնունդ եւ այլն) իրականացնել Հյուսիսային Իրաքում գտնվող ամերիկյան զորամիավորումների համար: Փոխարենը Վաշինգտոնը խոստացավ 1 մլրդ դոլարի օգնություն եւ 8,5 մլրդ դոլարի արտոնյալ վարկ թուրքական տնտեսությանը: Այնուամենայնիվ, Անկարան Միացյալ Նահանգներին թույլ չտվեց իր տարածքն օգտագործել «հյուսիսային ճակատի» բացման համար:

Փաուելը թուրքական կողմին քրդական պետություն չստեղծելու «երաշխիքներ» տվեց, փոխարենը՝ «բացառվեց» թուրքական զորքերի ներխուժումը Հյուսիսային Իրաք: Սակայն լարվածությունն այդ հարցում

չթուլացավ. ապրիլի 10-ին քրդական զորաջոկատները (փեշմերգա) մտան Քիրքուկ (հաջորդ օրը նրանք գրավեցին նաև Մոսուլը), ինչին Անկարան բավականին կտրուկ արձագանքեց: Ամերիկյան կողմը պաշտոնական Անկարային կոչ արեց խուսափել կտրուկ գործողություններից՝ խոստանալով Քիրքուկ եւ Մոսուլ ուղարկել ամերիկյան լրացուցիչ զորամիավորումներ՝ այդ քաղաքներում փեշմերգային փոխարինելու համար:

Ամեն դեպքում Անկարայի մտահոգությունները հաշվի առնվեցին. Քիրքուկ եւ Մոսուլ քաղաքներում փեշմերգային փոխարինելու եկան ամերիկյան ծովային հետեւակները, որոնք հյուսիսիրաքյան այդ երկու քաղաքները վերցրին իրենց վերահսկողության ներքո:

\* \* \*

Հստակ է, որ քրդական գործոնը մեծացնելու է իր ազդեցությունը տարածաշրջանի գործընթացներում՝ շնորհիվ թե՛ իր ներուժի, թե՛ արտատարածաշրջանային «ուժի կենտրոնների» միջամտության: Եվ այս առումով, մերձավորարեւելյան միջազգային հարաբերությունների համակարգը կարող է ենթարկվել էական փոփոխությունների՝ սկիզբ դնելով որակական առումով նոր գործընթացների:

## ՄԱԿ-Ը ԻՐԱՔՅԱՆ ԾԳՆԱԺԱՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ Գագիկ Տերտերյան

Ամերիկա-բրիտանական ուժերի ներխուժումն Իրաք ոչ մի կերպ չի կարելի դասել թույլի եւ ուժեղի միջեւ հերթական անարդարացի պատերազմների շարքին: Իրաքյան պատերազմը ամերիկյան քաղաքականության տրամաբանական շարունակությունն է, որի վերջնական նպատակը Եվրասիայում գերիշխող դիրք գրավելն է: Իր հերթին նման քաղաքականությունը խարխուլում է մինչ այդ ստեղծված միջազգային անվտանգության համակարգը: Որպես հետեւանք՝ նվազում է այնպիսի կազմակերպության դերն ու հեղինակությունն, ինչպիսին ՄԱԿ-ն է:

ՄԱԿ-ն արդեն երկար տարիներ համարվում է միջազգային կյանքի անբաժանելի մասը: Դեռ Երկրորդ աշխարհամարտը չէր ավարտվել, երբ հաղթանակած երկրների ղեկավարները Յալթայում, իսկ ավելի ուշ՝ Նաեւ Պոտսդամում, նախանշեցին իրենց հետաքրքրությունների ոլորտներն ու նոր աշխարհակառուցվածքի ուրվագիծը: Հետպատերազմյան աշխարհի կարելորագույն տարրերից մեկն էլ հանդիսացավ ՄԱԿ-ը: Ասել, թե ՄԱԿ-ը հասել է այն ամենին, ինչ որ նախատեսված էր նրա ստեղծման ժամանակ, չափազանցություն կլինի: Սակայն ՄԱԿ-ը, իր բոլոր բացասական կողմերով հանդերձ, մնում էր միակ համաշխարհային կառույցը, որտեղ տուժող կողմը կարող էր «բողոքել անարդարությունից», եւ որի վերաբերմունքն այս կամ այն երեւոյթին կարծես թե արտահայտում էր համաշխարհային հանրության կարծիքը:

Հատկանշական է՝ նույնիսկ Խորհրդային Միությունը, որ բազմիցս անտեսելով ՄԱԿ-ին՝ պատժիչ գործողություններ էր անցկացնում Հունգարիայի, Չեխոսլովակիայի դեմ կամ ներխուժում Աֆղանստան, երբեւիցե հարցականի տակ չի դրել այդ կազմակերպության գոյության անհրաժեշտությունը: ՄԱԿ-ը մնում էր միջազգային անվտանգության ընդհանուր համակարգի կարգավորիչը:

«Սառը պատերազմից» հետո իրադրությունը ՄԱԿ-ում սկսեց կտրուկ փոխվել: Աշխարհում ուժերի հաշվեկշռի խախտումը, որի վառ վկայությունն է Հարավսլավիայի դեմ կատարված ագրեսիան, հանգեցրեց այդ կազմակերպության գործերում Արեւմուտքի գերակայությանը: Բայց 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո սկսեց փշրվել «միացյալ Արեւմուտք» հասկացությունը: Այդ միտումները հատկապես ուժեղացան իրաքյան խնդրի զարգացումներին զուգընթաց: Մի շարք երկրների, այդ թվում՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (ԱԽ) մշտական անդամներ Ֆրանսիայի, Ռուսաստանի, Չինաստանի ջանքերի շնորհիվ այդ խնդիրը հաջողվեց ինչ-որ կերպ «ներքաշել» ՄԱԿ-ի հարթություն:

Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, հարցը միջազգային իրավունքի դաշտում լուծելու բոլոր ջանքերն ապարդյուն անցան:

Այսօր շատերն են հակված համարելու, որ Իրաքի դեմ ռազմական գործողություններ սկսելով՝ ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան խախտել են ՄԱԿ-ի Ախ 1441 բանաձեւը. բայց նման զարգացումներ եղել են եւ անցյալում, ուստի շատերը կարծում են, որ վաղ թե ուշ ամեն ինչ կգա իր տեղը: Սակայն, թերևս, այդպիսի մոտեցումը չափազանց լավատեսական է:

Օրինակ, ահա թե ինչ է գրում Ռիչարդ Փերլը բրիտանական «The Spectator» թերթում. *«Սադամ Հուսեյնի ահաբեկչության թագավորությունը շուտով կդադարի գոյություն ունենալ: Սակայն Սադամը միայնակ չի հեռանա. նա իր հետ կտանի ՄԱԿ-ին: Իհարկե, ոչ ամբողջությամբ: Կմնան ՄԱԿ-ի «լավ գործող» կառույցները, կմնան անվնաս խաղաղարար ֆունկցիաները, այնտեղ չեն դադարի դատարկ խոսակցությունները: Իրաքում կմարի ցնորական գաղափարն այն մասին, թե ՄԱԿ-ը կարող է լինել համաշխարհային նոր կարգի հիմնադիրը: Իրաքի ազատագրման պատերազմին վերաբերվող բանավեճերում անհրաժեշտ կլինի վերանայել այն տխրահռչակ ազատական համոզումները, թե անվտանգությունն ապահովվում է միջազգային իրավունքով, որի պահպանմանը հետետուր են միջազգային կազմակերպությունները»:* Ասված է առավելագույնս ցինիկ, բայց շիտակ:

Տեղեկանքի կարգով ասենք, որ Ռիչարդ Փերլն ամերիկյան քաղաքական վերնախավի (իստեբլիշմենթի) «նեոպահպանողական» մասի, որի պարագլուխը պաշտպանության նախարարի տեղակալ Փոլ Վուլֆովիցն է, առանցքային դեմքերից է: Վերջինս, ինչպես հայտնի է, համարվում է ԱՄՆ-ի ուժային, այսպես կոչված «նեոիմպերիալիստական» քաղաքականության գլխավոր գաղափարախոսը: Փերլը ճանաչում ձեռք բերեց նախագահ Ռեյգանի վարչակազմում աշխատելու տարիներին: Այն ժամանակ նա վաստակել էր «խավարի իշխանի» համբավ, քանզի մեղադրում էր պետքարտուղար Շուլցին եւ ուրիշներին՝ «սովետների», չինացիների, արաբների եւ, ընդհանրապես, Իսրայելի բարեհաճությունը չվայելող ցանկացած պետության նկատմամբ «նուրբ» վերաբերմունքի մեջ: Ռ. Փերլը համբավ էր ձեռք բերել նրանով, որ ԱՄՆ նախագահական եւ Իսրայելի խորհրդարանական ընտրությունների ընթացքում եղել էր սենատոր Բոբ Դոուլի եւ վարչապետ Բենիամին Նաթանյահուի խորհրդականը: Դեռ վերջերս նա զբաղեցնում էր Պենտագոնին առընթեր Պաշտպանության քաղաքականության խորհրդի նախագահի կարեւոր պաշտոնը: Իսկ նրա՝ վերջերս տեղի ունեցած պաշտոնանկությունն ամենեւին էլ պայմանավորված չէր սկզբունքային նկատառումներով: Պարզապես Փերլը իր ծառայողական դիրքն օգտագործել էր ակցիաների վաճառքի հետ կապված կասկածելի գործարքում, ինչը գրավել էր Հետաքննությունների դաշնային բյուրոյի ուշադրությունը:

Այսպիսով՝ այն, ինչ գրում է Ռիչարդ Փերլը, արտահայտում է ամերիկյան ներկայիս վարչակազմի մտքերն ու կամքը: ԱՄՆ-ի կողմից ՄԱԿ-ի, դրանով նաեւ միջազգային իրավունքի անտեսումն ուղեկցվում է հենց Ամերիկայում ժողովրդավարական եւ իրավական հաստատությունների բովանդակազրկմամբ: Տպավորությունն այնպիսին է, թե այս երկրի գաղափարախոսները ցանկանում են առավելագույնս ազատվել ամեն կարգի սահմանափակումներից՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Անկասկած ուշադրության են արժանի որոշ վերլուծաբանների արտահայտած կարծիքներն այն մասին, թե գերտերությունների գործողություններում այսպես կոչված «քրիստոնեական դրդապատճառների» իսպառ անհետացումն ի զորու է աշխարհը նետել քաոսի գիրկը:

Մինչդեռ ՄԱԿ-ը անտեսելու ԱՄՆ-ի ցանկությունն այսօր համաշխարհային հանրության կողմից ուժեղ դիմադրության է հանդիպում: Դա արտահայտվում է ինչպես Իրաքի հարցով քննարկումները ՄԱԿ-ի օգնությամբ «իրական քաղաքականության» ոլորտ մտցնելու փորձի (օրինակ՝ «Նավթ պարենի դիմաց» ծրագիրը), այնպես էլ տարբեր երկրների ներկայացուցիչների ծրագրային ելույթների միջոցով: Վերջիններիս շարքին պետք է դասել «Ռոսիյսկայա գազետա» թերթում տպագրված Ռուսաստանի ԱԳ նախարար Իգոր Իվանովի հոդվածը:

ՌԴ ԱԳՆ ղեկավարը համարում է, որ *«Իրաքի պատերազմը համաշխարհային ողջ հանրությանը դրել է սկզբունքային ընտրության առջև: Ակնհայտ է, որ հետագա գործողությունների զարգացումից է կախված ոչ միայն Իրաքի ճակատագիրը, այլև միջազգային հարաբերությունների ապագան: Ըստ էության, այս ճգնաժամում են դրվելու ապագա աշխարհակառուցվածքի հիմքերը: Հատկապես կարեւոր է չանցնել սահմանը, որից անդին ահաբեկչության դեմ պայքարը կարող է վերածել ամբողջ ժողովուրդների, կրոնների եւ քաղաքակրթությունների հետ առճակատման»:* Այնուհետեւ Իվանովը հանգում է «ժամանակակից սպառնալիքներին ու մարտահրավերներին հակազդելու գլոբալ համակարգի» ստեղծման անհրաժեշտությանը: Այդպիսի կառույցին հարկավոր է բոլորի կողմից ճանաչված կենտրոն, որն սկզբունքորեն գոյություն ունի, եւ դա ՄԱԿ-ն է՝ իր «բազմաբնույթ համակարգով եւ միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովման գործում ունեցած եզակի փորձով»: Այլ խոսքերով՝ Իգոր Իվանովն առաջարկում է պահպանել ՄԱԿ-ի կառույցը, նրան տալով նոր՝ ժամանակակից իրողություններին առավել համապատասխան բովանդակություն:

Միջազգային անվտանգության նոր համակարգի ստեղծման անհրաժեշտության մասին է հայտարարել նաեւ Ուկրաինայի նախագահ Կուչման, որն, ինչպես հայտնի է, իրաքյան պատերազմում սատարում է ԱՄՆ-ին: Ուկրաինայի ղեկավարը նշել է, որ այդ պատերազմը «հակասություններ է առաջացրել ՆԱՏՕ-ի, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ու Եվրա-

միության ներսում»: Այլ խոսքերով՝ պատերազմն ի վիճակի է «ապամոնտաժել» նաև այլ միջազգային կառույցներ:

Այսպես թե այնպես, արդեն շատերին է ակնհայտ, որ «հին աշխարհի» ատրիբուտները հեռանում են անցյալի գիրկը: Բայց հեռավոր 1945-ին Յալթայում ու Պոտսդամում հավաքված ղեկավարներին, չնայած գոյություն ունեցող փոխադարձ թշնամանքին, միավորում էր սեփական հաղթանակներն ամրապնդելու եւ իրենց գլխավոր հակառակորդներ Գերմանիայի ու Ճապոնիայի կայսերական հետագա նկրտումները հնարավորին չափով սահմանափակելու ձգտումը: Այսօր այսպես կոչված հակաահաբեկչական կոալիցիան չկայացավ՝ հենց միավորող խնդիրների ու գաղափարների բացակայության պատճառով:

Միաժամանակ անհիմաստ է խոսել միջազգային անվտանգության մոտ համակարգի մասին՝ առանց ԱՄՆ-ի մասնակցության: Ամերիկացիների վերաբերմունքն այս հարցին շատ բանով այսօր ձեւավորվում է իրաքյան ռազմաճակատներում, առաջատար երկրների կառավարությունների աշխատասենյակներում, ինչպես նաև պատերազմի դեմ բողոքող ցուցարարներով լեցուն փողոցներում: Հնարավոր է, որ Իրաքի դեմ ռազմական հաղթանակից հետո «ճակատամարտի ավարտի» գլոբալ տեսարանն ամերիկացիներին այնքան սահմնկեցուցիչ թվա, որ նրանք ստիպված լինեն վերանայել իրենց հետագա զավթողական ծրագրերը: Այդ դեպքում բացառված չէ, որ ԱՄՆ-ը կնստի առարկայական բանակցությունների սեղանի շուրջ, եւ անվտանգության համակողմանի համակարգի ստեղծման գործում հնարավոր կլինի սպասել դրական տեղաշարժերի: Հակառակ դեպքում՝ աշխարհը կհայտնվի շարունակական պատերազմների իրավիճակում, որտեղ կոլեկտիվ անվտանգության համակարգի մասին խոսակցություններն առնվազն ավելորդ կինչեն: